

# ԵՂԵՂԱՆ ՓՈՂ

5-6 (139-140) մայիս-հունիս, 2018

## ՀԱՆԻՊՈՒՄ ՍՊԱՍՄԱՆ...

2018, ամառ, հունիս...  
Տերևնույթի բացումը Գյումրու հիմն համարվող երգով էր... Գե-տո ժպիտներ ջեռմ, հարագատ ու արեառատ՝ չնայած անսպասելի հորդառատ անձրեւին:  
...Հանդիպմանը հաջորդող երևույթն հեռախոսագանգ էր ստանում. «Ո՞նց էր Սարոն, հե-տո երկրորդում է հարցը, -ե՞րբ էր եկել»:  
Ամբողջ այդ օրվա ընթացքում զգացվում էր Սարո Գյումրեցու նաև ֆիզիկական ներկայությու-նը չիրազանց հյուրընկալ հարկի ներքո, փոքրիկ սենյակում: Գնչած հարցից հետո այն առավել բան իրական էր:

Իսկ օրում կարոտ կար, լույս կար անսպաս ու սպասում. սպա-սում էինք Սարոյին...

Նախածեռնությունը ԳՊ Շի-րակի մարզային բաժանմունքի նախագահ, բանաստեղծ Անդրա-նիկ Կարապետյանից էր, հյու-րընկալողը Հովհաննես Շիրազի տուն-թանգարանի տնօրենությա-նը ի դեմս տնօրեն Արա Պապան-յանի: Բացի Սարո Գյումրեցու «Գյումրի, քո կենացը...» /2016թ./ եւ «Դիմանկարի էքզիզներ» /2017թ./ գրքերից, ներկայացված էր նաև «Համայնակալներ» գրական-մշակութային հանդեսի համարների խորհրդանշական մի շարք, հանդես, որի հիմնադիրը եւ գլխավոր խմբագիրը 2006 թվա-կանից Սարո Գյումրեցին է: Այս առումով ամենեւին էլ պատահա-կան չէին հնչում ելույթ ունեցող-ների մտքերը, թե Սարոն մեկնեց իր հետ տանելով Գյումրին, իր Գյումրին... Նաև օրինաչափ էր, որ հեղինակի առաջին գրքի տրա-մաթանակալ համաթանգարանը գինու եւ ամառվա շունչը շի-րազայն հարկի տակ խորհրդանշա-լից հյուրընկալ սեղանի շուրջը հնչում էր միայն մեկ խոսք՝ «Սա-րո, քո կենացը»...

Իսկ օրում սպասում կար կախված, Սարոյի լույսն անսա-հման ու կարոտ...

Սարո Գյումրեցու ընկերու-րը, ընտանիքի անդամները, մտե-րիմներն ու գրչընկերները ջեռմ ու Սարոյի ստեղծագործական

աշխարհով հագեցած մթնոլոր-տում ոչ թե հիշում էին նրան, այլ խոսում էին նրա հետ, նրա ու նրա ստեղծագործությունների մասին: ԳՊ մշակույթի վաստակավոր գոր-ծիչ, ռեժիսոր Սիրանուշ Գուկաս-յանն ինքնատիպ արվեստով նյու-թալանություն հասնող շոշափելի կապ ստեղծեց բանաստեղծի հետ հընթաց ընթերցելով նրա գործե-րից: Ներկաներին ասումների իր պատահիկները բերեց դերասան-բեմադրիչ Վարդաշակ Ասատրյա-նը: Ելույթ ունեցան գրողներ Արա Արքայանը, Ռոզա Հովհաննիսյանը, Հակոբ Մուշեղ, Արմենուհի Մխի-թարյանը, Մնացական Մուրադյա-նը, Լուսինե Աղաջանյանը, հան-դես եկավ նաև «Դպիր» հրատա-րակչություն հիմնադիր-տնօրեն Դովիկ Կարապետյանը:

«Գյումրի, քո կենացը...» գրքի մասին ներկայացվեց գրականա-գիտական ծավալուն վերլուծութ-յուն /թան. գիտ. թեկն. 4. Սարոյի-րոպան/:

Բանաստեղծի ընտանիքի անդամների եւ անձամբ գրողի Սարո Գյումրեցու անունից շնոր-հակալությամբ հանդես եկավ ԳՊ Շիրակի մարզային բաժան-մունքի նախագահ Անդրանիկ Կա-րապետյանը հատկապես նշելով, թե որքան կարեւոր է ուսանող-ների, նոր սերունդի ներկայացու-ցիչների հանդիպումը այսպիսի միջավայրում՝ անկախ ընտրած մասնագիտությունից: Անդրանիկ Կարապետյանն իր խոսքում նշեց նաև, թե դժվար գտնվի մեկը, որ Սարո Գյումրեցի մարդու մասին խոսելիս չասի «մեր Սարոն»:

Հանդիպման ավարտին Մա-րոն արդեն ոչ միայն իրեն ճանա-չողների ու ընկերների «մեր Սա-րոն» էր, այլ նաև նրանց, ովքեր դեռ բախտ չեն ունեցել տեսնելու նրան /այդ թվում եւ տողերիս հե-ղինակը/, սակայն սպասում են այդ օրվան...

...Եվ օրում սպասում կար կախված. սպասում էինք Սե՛ր Սա-րոյին...

### ԿԱՐԻՆԵ ՍԱՐՏԻՐՈՒՅԱԼ



### ՍԱՐԴԱՐԱՊՍԱԾ ՀԱՅՈՑ ԶԱՆԳԱՀԱՐ...

Գնչում են զանգերն, ու նրանց դողանքը գնում, հասնում է դե-պի խորքը դարերի, մարդկանց գտնում Ավարայրի դաշտում, մա-հատակված Վարդանանց հոգի-ներում:

Գնչում են զանգերն, ու հաղ-թության եռագույնն է կրկին ծածանվում՝ Սարդարապատի, Բաշ-Վապարանի եւ Ղարաբաղիսա-յի ճակատամարտերում:

Գնչում են զանգերն, ու հաղա-քով հարություն են առնում հերո-սամարտի արծիվները՝ Դանիել-Բել Փիրովյանն ու Մովսես Սի-լիկյանը, Ալեքսանդր Վեբյուսյանն ու Սերգո Աթանեսյանը, Վարդան Ջաղինյանն ու Խորեն Իզիթյա-նը, Պանդուխտն ու հարյուրավոր շարքային մարտիկներ, կամա-վորներ, ֆիդայիներ:


Գնչում են զանգերն, ու զանգերի խորիտ հնչյունների ներքո տարածվում է Հայոց կաթո-ղիկոսի սրբազան կովի ոգևորիչ կոչը. «Հայեր, շտապե՛ք հայրե-նիքն ազատելու: Հասել է ռուպե-նը, երբ կարգաքանջուր հայ, մոռանա-լով իր անձնականը, հանուն մեծ գործի, հայրենիքի փրկության են իր կնոջ ու արջիկների պատ-վի պաշտպանության, պիտի դիմ իր վերջին ճիզը՝ քչնամուն հար-վածելու համար... Հայեր, ժամա-նակը չի դանդաղելու...Հայուհի-ներ, հիշեցե՛ք ինձեզրոդ դարու փափկատուն տիկնանց, որոնք ոգևորեցին իրենց ամուսիններին դեպի մեծ գործը անձա՛հ Վարդա-նի կովիների ժամանակ, հետեւե-ցե՛ք նրանց օրինակին, եթե չեք ուզում, որ ձեռ պատիվը ոտնա-տակ լինի, խախտուեցե՛ք այրե-նիք, հանուն բազմաշարքար հայ ժողովրդի ֆիզիկական գոյու-թյան, հանուն ոտնակոխ եղած ճշմարտության: Ուղի կանգնե-ցե՛ք: Դեպի գործ, դեպի՛ սրբա-զան պատերազմ...»:

Գնչում են զանգերն, ու մեզ կանչում է մի ողջ ժողովուրդ: Ժո-ղովուրդ, որն իր դարավոր պատ-մական փորձով հանդգել էր, որ առանց քչնամուն հարվածելու ու հաղթանակի նկատմամբ խոր հավատի չէր կարող գոյատեւել, ձեւավորվել որպես ժողովուրդ, որպես ազգ:

Գնչում են զանգերն ու հայոց պատմության հերոսամարտում 451թ. մայիսի կողքին ավելանում է եւս մի ճակատագրական մայիս: 1918թ. մայիսի 28-ին Սարդարա-պատի հերոսամարտում թուրքա-կան կանոնավոր բանակը գլխու-վին բախեցախվեց. մայիսի 24-26-ը՝ ճակատամարտի մարտերում են կրում Բաշ-Վապարանում, մա-յիսի 24-28-ը՝ քչնամին կասեցվեց Ղարաբաղիսայի մոտ մղվող պայ-քարում:

Գնչում են զանգերն, ու հայոց հիմնավորող հողում վերականգն-

վում է Հայոց պետականությունը, կրկին ծիածանվում է Ավարայրից Սարդարապատ հայ ժողովրդի պայքարին նվիրված «Սարդարա-պատի» պատերազմի երգը...



2007թ.  
**ԱՆԴՐԱՆԻԿԸ ԳՅՈՒՄՐԻՈՒՄ**  
Գյումրի, ի՞մ Գյումրի: Բո մեծ ավերումից հետո, երբ ընդամե-րը մեկ ամիս էր մնացել քո մեծ ցավի տարելիցին, դու առաջին անգամ քո հյուրընկալ ու հյուրա-սեր, քո տառապած ու ցավից ճաք տված վիրավոր հողում հավաքե-ցիր զավակներդ: Մեր ազգա-յին զարթոնքի շեփոհարումով գորահավաք արեցիր: Իսկ ի՞նչ էր պատահել: Պատահել էր այն, ին-չին վաղուց կարոտով սպասում էին գյումրեցիները: Իր ճեռմով ծին հեծած, ոտքի տակ տված օս-մանու անթիվ բանակը, Լեզնդար թուրք օրում խաչածեւելով՝ Գյու-մրի էր մտել զորավար Անդրանիկը: Այդ օրը մեծից փոքր գյումրեցի-ները ավանդական աղ ու հացով, կարոտի արցունքաչ աղոթքով էին դիմավորելու իրենց Ամե-նայն Հայոց Չորավարին: Արցա-յի թաղամասի կենտրոնում, իր ժայռեղեն բարձունքից կարծես ժողովրդին իր ֆիդայական ող-ջույնն էր հղում Չորավարը: Հույս ու Հավատ, գոյատեւելու կամը ու կորով էր ներշնչում:

### ԱՆԴՐԱՆԻԿԸ ԳՅՈՒՄՐԻՈՒՄ

Հավաքված բազմությունը մի պահ լռում է, քարանու: Փառի-կի Պեր-Լաշեզ գերեզմանատա-րը հանգչող գորավարի շիրմից վերցված սրբազան հողը շաղ են տալիս մայր հողում կանգնեցված հուշարձանի շուրջը: Այնուհետև մարդիկ լուռ եւ գլխահաս մոտե-նում են հուշարձանից բխող սառ-նորակ արցյուրին, մի ափ ջուր խմում եւ օրինում հուշարցյուրը կառուցողներին (գյումրեցիները այսօր սիրով ու հարգանքով են տալիս Արցախի թաղամասի բնա-կիչ Հենրիկ Զյարամյանի անունը, որի կազմակերպչական ավան-դը շատ մեծ է այս հայրենակներ գործում): Չորավարն իր առա-պելակալ բարձունքից կարծես երախտագիտության եւ բարե-մաղթանքի խոսքեր է հղում գյու-մրեցիներին, բոլոր նրանց, ովքեր իրենց կորստի մրմունջն ու ծով կսկիծը հողում անթեղած եկել են դիմավորելու իրեն, մասնակե-ցելու համաժողովրդական այս ճանաչմանը: Գնչում են զանգերն, որի հեղինակը Արցախի թաղա-մասի բնակիչներն են: Ժողովուրդ, որը հանգանակություն կազմա-կերպեց, օր ու գիշեր աշխատեց Գյումրվա բազմաշարքի կարպե-տների հետ, օգնեց նրանց ձեւ ու մարմին հաղորդելու իր վաղեմի երազանքին, որպեսզի գորավարի հայացքի տակ սրբոնե պահ տա մեծ երկրաշարժի գոհեթին նվիրված հուշաքարը, որպեսզի

Գյումրի, ի՞մ Գյումրի: Բո մեծ ավերումից հետո, երբ ընդա-մենը մեկ ամիս էր մնացել քո մեծ ցավի տարելիցին, դու առաջին անգամ քո հյուրընկալ ու հյուրա-սեր, քո տառապած ու ցավից ճաք տված վիրավոր հողում հավաքե-ցիր զավակներդ: Մեր ազգա-յին զարթոնքի շեփոհարումով գորահավաք արեցիր: Ուրեմն, կաս, Գյումրի: Փա՛ռք Աստուծո՛ւ...

1989թ.

**ԳՅՈՒՄՐԻ, ԲՈ ԿԵՆԱՅԸ...**

Հրաշք լիներ մի օր, Լիներ ֆայտոն մի հին, ճամփաներով մոլոր Իճճ հասցեներ Գյումրի:

Արվաչայի ափին Նորից սուկրա բացեի, հսնեի կարմիր գիծին, Հետև էլ մի կու՛շտ լացեի...

Կանցեի ընկերներիս, Հին տղերքին բաղաքի, Վերջ տայի ծարավներիս, Կարոտներիս անգին...

Եվ դուրուկի սխտուր Գնչուներդ մեր Սարոյի ցավով անլուր Հիշելի կորուստը քո:

Ու դարդոտած խնեի Գյումրի, քո կենացը, Գավաթիս մեջ խելդեի Տղամարդու լացը:

...Ու համուսեր նորից Զեռից արուհաղը Գնչուում քո կարոտից Տախել ծերացածը...

**ԳՅՈՒՄՐԻ, ԲՈ ԿԵՆԱՅԸ...**

**ՍԱՐՈ ԳՅՈՒՄՐԵՑԻ**



# ՀՈՎԱՆԱՎՈՐ ԿԵՐՊԱՐՆԵՐԸ ՕՐՈՐՈՑԱՅԻՆԻ ՏԻՐՈՒՅԹԻՄ

ՀԱՍՄԻԿ ՄԱՏԻԿՅԱՆ

Մանկանց աշխարհում կենցաղավարող օրորոցային երգը գրեթե մշտապես բնակեցված է հովանավոր կերպարներով: Օրորոցային տեքստերում հիշյալ կերպարներն ունեն լայն բաշխվածություն և հաճախադեպ կիրառություն: Վերջիններս կարող են ունենալ նաև նկարագրական այլ անվանումներ՝ պահապան, մկրտատու կամ խնամարկու ոգիներ: Հովանավոր կերպարները տարբեր գործառնություններով են հանդես գալիս օրորոցային տիրույթում. մի դեպքում պաշտպանող, աստարող, մյուս դեպքում հանգստացնող, քնեցնող և այլն: Եշված գործառնությունները հաճախ լրացնում ու փոխարինում են միմյանց, քանի որ եթե երեխան պաշտպանված է, ապա բուժը հեշտությամբ կայացել է նրան. այս պարագայում հովանավոր կերպարին կարող ենք տալ ևս մեկ բնորոշում՝ քնաբեր ոգի՝ հաշվի առնելով նրա հանգստաբեր, մեղմօրոր գործառնությունը:

Շատ օրորներում հստակ նկատելի է, որ մայր օրորասացը դիմում է մանկապահի հովանավոր կերպարներին (Սուրբ Աստվածամայր, Աստված, հրեշտակներ, սրբեր) որպես գերբնական ուժերի: Մեջբերենք վերոնշյալը հաստատող բանասիրական պատասխալ.

**Օրո՛ր, օրո՛ր, Տերը տա քնիկ,**  
**Մարիամ մարը՝ խաղաղու-**  
**քունիկ,**  
**Մարիամ մարը՝ խաղաղու-**  
**քունիկ.**

**Դու՛ն պառկիս է՝ անուշ քնա-**  
**նաս:**

Սուրբ Մարիամի դերակատարումը տեքստում կրկնվում է՝ ընդգծելով նրա մանկան հովանավոր լինելու գործառնությունը:

Որպես մանկանցի պահապաններ՝ հրեշտակները նույնպես հիշատակվում են: Միջաբերենք անզլայեզու օրորոցային մի քարզանված տարբերակը.

**Քնի՛ր, փոքրիկս, քնի՛ր,**  
**Թող խաղաղությունը քեզ պարտի,**

**Աստծո կողմից ուղարկված հրեշտակները**

**Քեզ ամբողջ գիշեր պահապան լինեն:**

Հրեշտակները հայտնվում են նաև հայերեն օրորոցային տեքստերում.

**Նանիկ, մտամուրթի օրդի,**  
**Նանիկ,**

**Քամին փչեր, օրորացնուր,**  
**Եղնիկնին գային քեզի ծիծ տային,**

**Հրեշտակնին գային քեզի լեզացնեին,**

**Նանիկ, մտամուրթի օրդի,**  
**Նանիկ:**

Ազգագրագետ Ե. Լալայանը նշում է, որ ամեն երեխա ունի պահապան բարի հրեշտակ, որ մի ամբողջ տարի խնամում է նրան, ջուր տալիս, եղունգները կտրում, յուր ձեռքի խնձորով զբաղեցնում, ծիծաղեցնում

նրան: Նա քները բաց կանգնած է լինում երեխայի սնարի մոտ կամ առագաստում, որտեղից անդուլ հսկում է նրան:

Որպես մանկանցի պահապաններ՝ հրեշտակները նույնպես հիշատակվում են քնամուտի տեքստերում:

**Քանախուսական տարբեր օրորոցային տեքստերում հրեշտակ բառը կարող է լինել երեխային ուղղված դիմելանք, օրինակ՝ Քնի՛ր իմ հրեշտակ, քնի՛ր: քնի՛ր իմ հրեշտակ արդար: Հաճախ էլ հայկական օրորներում Անզեկս բառն է նշվում. ենթադրաբար այս անունն առնչվում է երեխայի մաքրամաքուր ելույթյան, հրեշտակային բնության հետ.**

**Նանար բալես, նանար,**  
**Անուշ նանար, իմ ծաղիկ,**  
**Դռանս անուշ վարդ, իմ բալա,**  
**Սիրուն ծաղիկ, իմ լալա,**  
**Իմ անուշ Անզեկս /մեր գրասուրբերից՝**

Ըստ ժողովրդական պատկերացման եթե երեխան քնի, ապա քնի հրեշտակը կխռովի:

Հրեշտակները՝ որպես մանկապահի պահապաններ, հիշատակվում են նաև Սուրբ Գրքում. «Ձգո՛ւ լացե՛ք, որ այս փոքրներից մեկին չհամարձեք. Որովհետև ասում են ձեզ, որ նորանց հրեշտակներն երկնքումը միշտ տեսնում են իմ Հօր երեսը որ երկնքումն է» (Մատթեոսի ավետարան, 18, 10):

Բանասիրական շատ արբյուրներում հիշատակվում են նաև սրբերը, որոնք նույնպես մանկապահի գործառնությունն են: Անզլայեզու օրորոցային տեքստերում, հատկապես իռլանդական օրորներում, Սուրբ Պատրիկն է հիշատակվում, որի պահապան, հոգատար վերաբերմունքը առավել տեսանելի է միջտեքստային մակարդակում /օրինակը-մաղթանք տեքստ՝

**Հատկանշական է այն իրողությունը, որ սուրբ Պատրիկը որոշ օրորոցային տեքստերում ունի նաև օրորասացի գործառնություն: Օրորոցային տեքստի վերնագիրը՝ սուրբ Պատրիկի օրորայինը /Saint Patrick's lullaby/ այնքան կարևորված է, որ օրորոցայինը նրա անունն է կրում.**

**Սրբերի հիշատակումը տեքստերում բավականին շատ է: Վաճառ օրորներից մեկում հիշատակվում է սուրբ Սարգիսը.**

**Ե՛ն յոթն էրեց քյո ստեղծող,**  
**Սուրբ Սարգաս ծին գորավոր,**

**Խեծնիր էրթեր ուխտավոր:**

.....

**Օրո՛ր, օրո՛ր, քանիկս,**  
**օրո՛ր,**

**Օրո՛ր, օրո՛ր, գառնիկս,**  
**օրո՛ր:**

Ըստ ժողովրդական սովորության երբ երեխայի աչքին խիլ է աճում, կամ որևէ բան է ընկել աչքի մեջ, մայրերը քաշ-

կինակի ծայրը քրով խոնավացնում էին, ուլորում և մրմնջալով հետևյալ արոթքը, քաշկինակի ոլորած ծայրը մոտեցնում երեխայի վնասված աչքին ասելով. «Այնիս, բայնիս, հավատամ Սուրբ Սարգիս, խիլ հան, տուր իս»: Երեխայի թարթիչների տակ քաքնված խիլը անմիջապես ընկնում էր (Հ. Խառատյան-Առաքելյան, Հայ ժողովրդական տոները, Եր., 2005, էջ 70):

Միջտեքստայնորեն ուշադրավ է սուրբ Սարգիս գործառնության զուգարդումը: Եթե բանասիրական այլ ժանրերում, մասնավորապես հեթիաբներում, սուրբ Սարգիսը հանդես է գալիս որպես մուրազատու, ապա օրորներում ունի մանկապահական գործառնություն:

Մեկ այլ սրբի՝ սուրբ Կարապետի մասին է Նախիջևանի հետևյալ օրորը.

**Ուխտ արիլ մի՛նք ամենք՝**  
**Սուրբ Կարապետ ուխտ էշքաս.**  
**Օրոր-օրոր, իմ անգինս,**  
**Քունդ աչքերեդ կկախի.**

Ըստ ելույթան գերբնական իրական կերպարները հանդես են գալիս գերբնական տիրույթում, և հերոսները ներդաշնակ են այդ միջավայրին, նրանց գործողություններն էլ քննարկվում են հենց այդ միջավայրով: Օրորոցային տեքստերը հնչում են իբրև պահպանիչ մանկան համար. այն չարխափան է, ունի չար աչքից ու չար մտքից երեխային գերծ պահելու հնարավոր գործություն:

Մեր կատարած բանագիտական ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ արոթքը հեշտությամբ կարող է փոխարինել օրորոցայինին, և հաճախ դժվար է տարրորշել արոթքի և օրորի սահմանները. գերակա պատճառը երևա օրորոցայինի տեքստում հովանավոր կերպարների շատ լինելն է: Ըստ ելույթան, օրորոցայինը, ինչ-որ առումով արոթք տեքստ է: Մեր առաջադրած հարցին, թե ինչով է պայմանավորված օրորոցային տեքստում Աստծո, սրբերի, հրեշտակների պարբերաբար հիշատակումը, բարձր տարրից խմբի ներկայացուցիչներն ընդգծել են հատկապես վերջիններիս քրիստոնեական դաստիարակություն հարողելու, սերմանելու իրողությունը:

Բանասաց Արեգմազան Մխիթարյանը ասացողական բացառիկ ունակությամբ համեմատական եզրեր էր փորձում գտնել օրորոցայինի և հոգևոր բնույթ ունեցող տեքստերի միջև՝ նշելով, որ օրորը պետք է համեմել արոթքի տարր պարունակող բառերով պարբերաբար նշելով **Աստված, Ամեն** և երգել հատկապես երեխային քնեցնելուց առաջ: Ասվածը ավելի դիպուկ ներկայացնելու համար միջաբերենք բանասացի խոսքերը. «Շատ հաճախ օրորը փոխարինել է մաղ-



մտներից վերցված տողերով, որոնք եղել են հանգստացնող թե՛ ինձ համար, թե՛ օրորոցում քնող երեխայիս համար: Որպես օրորոցային երգել են Մաղմուր 91-ի այն խրատական տողերը, որոնք մատնանշում են Ամենակարողի հովանավորությունը գիշերային թվացյալ կերպարների դեմ. «Բարձրյալի ծածկոցի տակ բնակվողը Ամենակարողի շուրթի տակ է հանգստանում: Ես կասեմ Տիրոջը. իմ ապավեն է իմ ամբողջ, իմ Աստված, որին ես հուսացած եմ: Որովհետև նա կփրկի քեզ որսողի որոգյաթիցը, չար ժանտամահիցը: Ես կծածկի քեզ իր փետուրներովը, նրա քների տակ ապաստվ կլինես. նրա ճշմարտությունը ասպար է և զրահ: Դու չես վախենա գիշերի զարհուրանքից, այն նետուրից, որ թռչում է ցերեկը: Ուշազրավ է բանասացի հետևյալ դիտարկումը. «Եթե հավատալով, հուսալով, զգացմունքով և անկեղծությամբ ես երգում, ապա Տերը իր հովանավորությունը, խաղաղությունը իջեցնում է մանկան վրա, և մանուկը անխռով քուն է մտնում: Միավասիկ բանասաց-օրորասացի երգած տողերը, որը, ըստ նրա, ծառայել է որպես օրորեթք.

**Թևերդ, Տեր իմ, թող ըլլամ,**  
**Ինձ հովանի և ապաստան,**

**Դո՛ն բնակվի՛նք մենք անվորով.**

**Չերձ վտանգե և ապահով:**

Բանասացի խորին համոզմամբ՝ մանուկ ունկնդրին պետք է փոխանցել ազգային ոգին ու նկարագիրը՝ հայրենասիրություն, քրիստոնեական դաստիարակություն, ավանդական բարքերի պահպանում:

Այսինքն՝ բանասիրական օրորոցայինը մի ամբողջ ժողովրդի նկարագիրն է: Շրջապատող աշխարհը մանուկ ունկնդրի համար առաջ է մղվում այնպիսի ուժերի կողմից, որոնք շարունակում են մնալ անբացատրելի, երբեմն էլ հանդես են գալիս քողարկված ձևով. աստվածաճանաչողության առաջին քայլերն սկսվում են օրորոցից՝ օրորոցային տեքստի միջոցով:

Օրորոցայինի իմաստն ու նշանակությունը նաև այն է, որ երեխային ի սկզբանե տալիս ենք այն ըմբռնումը, որ հովանավոր կերպարները աստարում են նրան կյանքի անցումային փուլերում: Մայրը երգում է այս օրորոցայինները, որով կարծես իր գավակին հանձնում է նշալ կերպարների խնամքին:





# ՀՅՈՒՄԱՆԱՐԱՆ



## Անահիտ Ղազախեցյան

Ծնվել է 1999 թ. Կանադայում: 2017 թվականին ավարտել է Կանադայի Վ. Տեր-Ջանի անվան թիվ 5 ավագ դպրոցը և ընդունվել Երևանի Սլավոնական համալսարանի միջազգային հարաբերությունների բաժինը: Այժմ երկրորդ կուրսի ուսանող է: Երա բանաստեղծությունները տպագրվել են «Երկունք» գրական թերթում և «Գարուն» ամսագրում:

### Փազլ

Իմ բոլոր նախորդ կյանքերում ես փնտրել եմ թեզ, երբ եղել եմ առաջին հոմոսափինեսը, ծառ, ծովի ավազ, Ասորեստանի արքայադուստրը, Բաբելոնյան աշտարակը, հեթանոս աստվածությունը, երբ եղել եմ գոհ, հետո՝ զոհասեղան, կրակապաշտ, քրիստոնյա, ազնուտիկ ու աքեխտ, երբ սուրճ եմ խմել Կանտի հետ, ես հոլանդական դաշտերի արևածաղիկներից էի ու Դեմինգուեյի կատուներից մեկը, ես հիմնադրել եմ 3-րդ ռեյտը, ծրագրել Թեհրանի մահափորձը, սկսել Բեռլինի պատի կառուցումը, ներկա գտնվել «Բիթլզի» համերգին, Կրակել Զոն Լենոնի վրա, ես եղել եմ այն գետը, որտեղ խեղդվեց Բաբելոն: Ես Մերկուրիի

դաշնամուրն էի: Բոլոր կյանքերից ես հավաքել եմ թեզ ու հասցրել իմ օրեր, ես մաս առ մաս գտել եմ թեզ նախորդ կյանքերիցս, երբ դու դեռ քարանձավաբան էիր, կանաչավուն տերև, ծով, Մարաստանի թագավոր, նորաստեղծ լեզու, գեղագույն աստվածություն, երբ թեզ տաճարներ են նվիրել ու մատուցել զոհեր, երբ դու եղել ես մոգ, բուրդայական, աստվածամերժ ու բողոքական, երբ թեզ ես պատրաստել Լիցշեի համար իր հիվանդասենյակում, երբ դու Կան Գոգն էիր, Դեմինգուեյի գինակիցը, որ հեթո՞վ գրվել է նրա կատուների, դու կապիտալիզմի սկիզբն ես, համակենտրոնացման ճամբարի հրեաներից, դու մեկն ես Բեռլինի պատը քանդողներից, իմ ձեռքի ատրճանակը, Տեֆֆ Բաբլին, Ֆրեդի Մերկուրիի մատները, մենք կտոր-կտոր հավաքվել ու հասել ենք այսօրվան: Զգիտե՛մ գտե՛լ ենք իրար, թե՛ պակասող կտորներից ենք:

\*\*\*

Օրը բացվում է, մթնում, գիշեր է փովում ու լուսանում անկախ նրանից, որ երեկ ինչ-որ երկրում ատրճանակները պահեցին խաղաղ ցույցի դուրս եկածների վրա, որ գիշերվա կեսին շտապօգնության մեքենաները սուլոցով անցնում էին փողոց հայող շենքերի տակով ու շփոթված կյանքեր տեղափոխում, կամ որ երկրագնդում ինչ-որ մեկը տղային կոչեց Միխայել կամ Զարու, աղջկան Ֆրիդա կամ էլ Ջեյն: Օրը մթնում է, լապտերները վառում են մթնելում պես ու անջատում լուսանալուց կախված:

Մեկն անբացատրելի թմրադեղից է կախվում, Մեկը մարդուց, մյուսը՝ գնացողի փեշերից, մեկն էլ է պարանից:

Իսկ արեգակն ու լուսինը, բոլոր կախվողներից անկախ, հեթո՞պալում են հորիզոնում, մեկ-մեկ ակամօքները կախում

սրճարանների ու փաբերի պատերի մոտ մի կտոր ռոք կամ բյուզ լսելու, պատի տակ ծխելու, Քթի տակ Ուեյքսի Blue Valentine-ը երգելու, Լեգրանի «Թեզ կապասեմ»-ին հավատալու:

Խավարը լույսով է լցվում, լույսը խավարով, իսկ աշխարհում շուտով կծնվի 8 միլիարդերորդ մարդը, որին ծնողները կանվանեն մեկնումեկի առաջին սիրո, Կան Գոգի, Յուլիաների արբանյակի և կամ Քոնեի պոեմներից մեկի հեռոսի անունով, ու որը, կորցնելով ամեն ինչ կամ փորձելով գտնել ինչ-որ բան, աշխարհի բոլոր ժամերը երկու ժամով հետ կտա ու կհավատա՝ ուշ կմթնի:

Դեռ չգիտես՝ փոխվողը միայն մայրամուտի ժամն է լինելու:

Որովհետև գիշերանալու է ու ցերեկանալու, ու ժամապեղները կեսօրի վրայից դեպի երեկո են նետվելու՝ չնայած ինձ, թեզ, պատերազմին ու այն սիրելի մեկին, ով այս գիշեր ողջ մնաց, ռումբը մի քանի մետր այն կողմ ընկնելու շնորհիվ... կամ... պատճառով, ու որին դեռ... չեմ ճանաչում:

\*\*\*

Աշխարհում այնքան ուրվական կա, գալիս, մնում են մեջս, կշիռ չունեն, բայց ծանրությունից քիչ է մնում շուրջս փչել: Այնքան ուրվական կա անտարբեր, մոխրագույն, կանաչ հայացքով, երեքշաբթի օրերին թափառող: Տատիկն ասում է՝ շորդ համիր, մարդու վրա ինչ-որ բան կարելի չի կարելի: Զեմ համու: Կարելի է, տատ: Ոչ թե մենակ շոր կարել, տատ, մարդուն կարելի է ուրվականակապ անել, մարդուն խաբել է կարելի, տատ,

մարդուն կարելի է միտք տալ ու գրիչը ձեռքից վերցնել, Տատ, մարդուց գողանալ էլ է կարելի, պոկել, ուզում ես հավատա՞, ուզում ես՝ չէ՛, բայց սպանելն էլ է արդարացուն գտնում, տատիկ, կասես՝ հա՞: Դա՛, էլ էլ կարելի է, տատ, անտեսելով, ապրելու հեճակ չտալով, ստեղծելու հնար չբողմելով, դե կարելի է, տատ: Ի՞նչ կա որ: - Իրիկունը աղբ թափել չի կարելի, էլի կրակն ես ընկնում, տատ: Ասում եմ՝ հիմա չի կարելի-ն կրճատվել, սեղմվել է մի քանի պատվիրանի, մի քանի դիմացող օրերի մեջ, չ տառը տեղի է տալիս: Տատ, մի բան ասե՛մ: հիմա սիրել է կարելի: - Կա՞, էլ ո՞նց... ամոք չի բա՞: - Ամաչել չկա, տատ: - Սիրելու համար շուտ չի՞: - Սիրելու համար մե՞նակ ուշ է լինում, տատ: Տատ, եղբայր մի նայիր էլի: - Մեր ժամանակ ուրիշ էր... Դա՛, տատ, ուրիշ էր: Ատամները սրած ժամանակ էր, տատիկ, խելքը գլխից սիրելը մեղք էր, դու պապիկին կարգին չես էլ ճանաչել, չէ՛: Գիտե՛մ, հիմա սիրելու ժամանակն է, իրար ճանաչել ու սիրելուց հետո չսիրել էլ է կարելի, տատ: Բանաստեղծությունները գրել է կարելի, տարբեր մարդկանց մասին գրելը ներվում է, հիմա ուզում ենք հասկանալ Մայակովսկու անընդունալ սերը, ուզում ենք արվեստից չամաչել: Ինձ «Մաճուն Լեակոն», կարծե՛մ, դպրոցի գրադարանավարը թարս-թարս նայելով չի տալիս: (Աշխարհում այնքան ուրվական կա - ու ի՞նչ մեկ-մեկ թվում է հեթո՞վ մեջս ապրել են: Քեզ է՛լ է թվում, տատ:) Տատ, այ տատ, վերնաշապիկիս կոճակը ընկել է, կկարե՛ս, ասեղը թելել եմ, տատ, չէ՛, չե՛մ հանելու, շտապում եմ, ուշանում եմ սիրելու ժամանակից, տատիկ... ուշանում եմ, ուշանալ չի կարելի, տատ, էլ մի բանը չի կարելի...



## Անուշ Հարությունյան

Ես Անուշ Հարությունյան եմ, ծնվել եմ 1999թ.-ի դեկտեմբերի 24-ին Առափի գյուղում: 2017թ.-ին ավարտել եմ տեղի միջնակարգ դպրոցը, այժմ սովորում եմ ՇՊՀ-ի սերվիս բաժնում:

### Ջուզահեռների բախումը

Կեղծիքն այն զենքն է, որով հնարավոր է դիմանալ ճշմարտության հարվածներին (արդյուք հնարավոր է նրանով այն, ինչ չկա, դիմանալ նրան, ինչն իրոք կա), բայց գալիս է մի շրջան, երբ կեղծիքից մարդիկ կշտանան եմ ու այլևս չեն ցանկանում սնվել դրանով, իսկ նրանք ուրեք երկար ժամանակ կերակրում էին կեղծիքով, հանկարծ սկսում են զարմանալ կերակրվողների «ճաշակի» փոփոխություն:

Մի: Զէ՛ որ ճշմարտության ուղին միշտ բարդ է, իսկ հեշտ ուղիով քայլելու սովոր կերակրվողների պակասեցը՝ միանգամայն անտրամաբանական, բայց ինչպես բոլոր կերակրողները նրանք նույնպես հաշվի չեն առնում կարևոր հանգամանքները, որ կերակրվողների միտքը կարող է «կշտանալ» անորակ կեղծիքից, ու որ օժտանյալն իրականության մեջ ապրելը դադարում է կենսական անհրաժեշտություն մնալուց: Ինչքան էլ որ զարմանալի է, այդ գաղջ մթնոլորտում ծնվում է հզոր պայթյուն, որն սկզբում փոքր է, բայց իր ուժին համոզված, որի շնորհիվ ընդգրկում է ավելի լայն շերտեր անզան ամենաթերահավատներին ու նրանց մտքից մաքրում տարիներով կուտակված դառնամաղձը: Զարմանալի է, բայց և օրինաչափ՝ մեկի շարունակ կայծք կտորացավ այրել տարիներ շարունակ կուտակված կեղծիքը, ու բոլորի աչքերում առկայծեց հույսը: Անօ-

րենությունից հոգանած կերակրվողները պայծառացան, միացան ու հավանացին ցանկության ուժին: Զարմանալի բարոյություն տիրեց, աներեք հավատ սեփական ուժերին, ու բոլորը միասնաբար որովհետև կուտորում էրդադան կեղծիքը: Բայց կերակրողները չէին վաճառում ճաշացանկը փոխելու ցանկությունից հաշվի չառնելով, որ կեղծիքի թողած դառնամանակ այնքան անտանելի է, ու կուլ տալն այլևս հնարավոր չէ: Ուստի ճաշացանկը չփոփոխելու անվորով անորոշվելություն ավելի միավորեց վարչակարգից դուրս մնացած, կարծում եմ, ավելի լավ կերակրողի շուրջը: Դուսանք, որ այս նրը, որ բոլորի մտքից մաքրեց անկարողության, ոչինչ փոխել չկարողանալու մտայնությունը, կշարունակի անընդհատ բարմացնել ճաշացանկը, որտեղ միանշանակ կբացատրվի անօրենության չնչին դրսևորումն անգամ:





**Լուսինե Աղաջանյանի գրույցը** գրգռում է ազգային բարեգործական-հասարակական կազմակերպության փոխնախագահ, Երևանի պետական կոնսերվատորիայի Գյուլնուր մասնաճյուղի ղեկավար Տիգրան Գովհաննիսյանին հեն:

Տիգրան Գովհաննիսյանի գինվորական հայրը լսել անգամ չուզեց, որդու ռազմական օդային դասնալուծ ծրագրի մասին: Միգուցե ծնողները նկատել գիտեն հոգու անտեսանելիք, այս դեպքում հոգում նվազարանի առկայությունը, որոնց հնչյուններն էլ ճանաչված երաժիշտներ Դելի Մելիքյանին ու Լոյեն-գար Գովհաննիսյանին հուշեցին պատանի Տիգրանին ուղղորդել երաժշտության մոզակամ աշխարհ:

**Լ.Ա.Ռոտեղից եք գալիս և ո՞ր եք գնում...**

Տ.Գ.-Երբ ընդունվեցի երաժշտական ուսումնարան, հասկացա, որ այն հենց ճանապարհիս սկիզբը դարձավ, երաժշտական ճանապարհիս, որի ուր գնալն էլ կանխորոշված էր կրկին դեպի երաժշտական ապագա...

**Լ.Ա.Մուսա ունե՞ք...**

Տ.Գ.-Եղել է նաև, որ ստեղծագործել եմ, երգել եմ ժամանակակից կոմպոզիտորների Ա. Բաբաջանյանի, Ա. Աճեմյանի, Ռ. Ամիրխանյանի ստեղծագործություններից: Մի՞թե այս ամենի համար մուսա պետք չէ...Այլ կերպ ասած՝ ներշնչանք: Ուրեմն ունեմ:

**Լ.Ա.Իսկ ինչպե՞ս եք գտել երաժշտի ու մանկավարժի ընդհանուր սահմանը...**

Տ.Գ.-Երբ ծնունդից ընտրել եմ երգչին մոլու ու ինքնաբերաբար:

# ՀՈԳՈՒՆԿԱԳԱՐԱՆ

Մանկավարժ դարձա այն ժամանակ միայն, երբ իբրև երաժիշտ հասունացել էի: Այս պահին չեմ կարող չհիշատակել իմ ուսուցիչներին, որոնք կարողացան ոչ միայն իրենց կատարողականով, այլև գեղագիտական մոտեցմամբ իմ մեջ նաև մանկավարժիմ ձևավորել: Մարջան Մխիթարյան, Ջարեհ Սահակյան, Ռոբերտ Աբայան, Զեղինե Տեր-Ղևոնդյան, Կարեն Կոստանյան, Էդվարդ Բաղդասարյան: Երանցից Ջարեհ Սահակյանը նաև կամերային անսամբլի իմ ուսուցիչն էր, որին հաջողվեց իմ մեջ ձևավորել երաժշտական կատարողական արվեստի հմտությունն ու իմ ողջ պատկերացումը:

**Լ.Ա.-Քաջի երաժշտական մասնագիտական կրթությունից, ի՞նչ է Ձեզանից ստանում Ձեր սանը:**

Տ.Գ.-Իհարկե, պարտադիր պայման չէ, որ բոլոր տվյալները երաժիշտներ դառնան, բայց իրենց հոգում հաստատ որպես մարդ, կրթության նոր որակ է մտնում, որ միայն երաժիշտներին է հատուկ...  
**Լ.Ա.-Ամբողջովին լցվա՞ծ եք երաժշտությամբ, թե՞ երբեմն առօրյալում կտրվում եք նրանից:**

Տ.Գ.-Ես սիրում եմ նաև սպորտով զբաղվել, խաղացել եմ ֆուտբոլ: Գինն էլ սպորտային մարզաճյուղում եմ անում: Սա էլ օրվա հենց այն հատվածն է, որն ինձ կտրում է երաժշտությունից:  
**Լ.Ա.-Երաժշտական ո՞ր ոճն է ազդեցիկ Ձեզ համար:**

Տ.Գ.-Դասականը միանշանակ, այն զարգացնում է լուրջ մոտեցում երաժշտության հանդեպ: Թե չէ՞ ռոմանտիզմն այն ոճն է, որ թույլ է տալիս յուրաքանչյուր կատարողի ինքնուրույն որոշել, թե ինչպես մերկայացնի: Դա արդեն զգացողության արտաբերում է: Իսկ հոգեկենտրոնվածով ինձ շատ մոտ են Բախը, Բեթհովենը, Զայդը, Մոցարտը, Կոմիտասը...  
**Լ.Ա.-Երաժշտի ամենակարևոր հատկանիշի մասին մտածե՞լ եք...**

Տ.Գ.-Ստեղծագործության ոգին ճիշտ ընկալելն ու մեկնաբանելու շնորհքը ու այդ ամենը մանկավարժական գործունեության մեջ ճիշտ փոխանցելու տարանջրը...

**Լ.Ա.-Շատ պետք է ու իմաստասերներն են անդրադարձել դաշնամուրի սև ու սպիտակ գույներին: Ձեզ համար նրանք հակադրական մե՞ջ են...**

Տ.Գ.-Ոչ, ներդաշնության: Ու ատհասարակ դաշնամուրն այն հասուն գործիքն է, որ կարող է ընդ թույլ տալ առանց սահմանափակումների տրվել երաժշտական արվեստին: Դաշնամուրով մեծ կտավի գործեր կարելի է ցույց տալ սիմֆոնիկ պատկերներ, օպերային և այլն: Այն կարող է ապահովել գործի ամբողջականությունը, լիարժեք հնչողականությունը...

**Լ.Ա.-Ձեր երևակայության մեջ ունե՞ք երաժշտական հայրենիք...**

Տ.Գ.-Այդ միջոց ինձ տանում է Լեհաստան, Գերմանիա Շոպենի ու Բեթհովենի հետ կապված:

**Լ.Ա.-Որպես դաշնակահար՝ ասելիքի մեջ հաստկապես ի՞նչն է Ձեզ շեշտադրում...**

Տ.Գ.-Տեխնիկական հնարավորությունները զարգացնելը: Երբ այս առումով ուժեղ եմ, արդեն հեշտորեն կկարողանաս զգացածդ արտահայտել...

**Լ.Ա.-Լավ, իսկ երկնային երաժշտությունն ի՞նչ գործիքով է ինչում Ձեր պատկերացմամբ...**

Տ.Գ.-Դրանք իմ լսելիքի համար տարբեր տեմբրներով են հնչում՝ ջութակի, հորոյի, թավջութակի, քնարի միջոցով...Որով հետև իրենցից յուրաքանչյուրը մի նրբերանգ է բերել երաժշտական կյանք, իսկ երկնային գույները պետք է շատ ու նուրբ լինեն:  
**Լ.Ա.-Մի տեսակ կտրվեցինք հողից: Գեղեցիկ երաժշտությունը երբև մեկին կարո՞ղ է փրկել:**

Տ.Գ.-Կարո՞ղ է ու շատ է փրկել: Ես նույնիսկ ակնատես եմ եղել նմանատիպ փրկության: Մեղեդին հոգեկան ամրություն ստեղծեց մեկի համար, ով ամենակամ կանքում երերում էր: Ես տեսնում էի, թե ինչպես է երաժշտությունը հավաքում այդ մարդուն, ուղղորդում...

**Լ.Ա.-Սովորություն ունե՞ք մատներով թխելիս կացնել սեղանին. սիրո՞ւմ եք լսել անձայն առարկաների ձայնը...**

Տ.Գ.-Ոչ, ես սովորաբար նվագում եմ իմ մտքի մեջ, ամփոփում եմ նյութը մտովի, զգում եմ այն ամբողջության մեջ, այնուհետև վերարտադրում...

**Լ.Ա.-Վատորակ երաժշտության հանդեպ ինչպիսի՞ վերաբերմունք ունեք:**

Տ.Գ.-Երաժշտությունը պետք է հագեցած լինի հարմունի լեզվով, ճիշտ մեկնաբանմամբ, բեմաստիկ զարգացումներով ու կամխառնելի չլինի: Եթե չկա այս ամենը, այն ինձ համար անհմատ մի բան է...

**Լ.Ա.- Սենդելսոնն ու Շոպենը խոսել են կյանքի ուրախ ու տխուր օրերի մասին, իսկ Դուք ո՞ր օրվա մասին կուզեանիք խոսել...**

Տ.Գ.-Ես առավելապես հակված եմ դեպի լավն ու լավատեսությունը. առաջնորդող ուրախ պահերն են գնահատում: Ես հաստատ լավ օրերի մասին կխոսեի...

**Լ.Ա.-Միա ուրեմն Ձեր մուսան, որի անունը սկզբում չգիտեիք, ուրախությունն է...**

Տ.Գ.-Այո, գտանք...

**Լ.Ա.- Եկեք անդրադառնանք նաև այն համայնքին, որտեղ երկար տարիներ Դուք կաք: Դայ երգը գրեցի Ձեր շնորհիվ երկրից երկիր է շրջագայում: Ունեցե՞լ եք օտարազգի հանդիսատես:**

Տ.Գ.-Իհարկե: Դայ երաժշտությունը գեղեցիկ մեղոդիկ պատկերներով է հագեցած, որ հասանելի



է նաև օտարի լսելիքին: Օրինակ ԱՄՆ-ում մեր փոքրիկների ելույթները լսելու համար մերկա էին ամերիկացի բարեգործներ: Երանք հետաքրքրվում էին տեսնելու, թե տնակներում սպորտ երեխաներն ինչպե՞ս կարող են իրենց դրսևորել այս ասպարեզում: Ու երեխաներին հաջողվեց իրենց հուզել թե՛ աշուղական երգերի կատարմամբ, թե՛ դասական գործերով: Երանք հիացանումը կրկնում էին, որ գուր չի եղել իրենց օգնությունը մեր քաղաքին ու երաժշտանոցին:

**Լ.Ա.-Սոհասարակ գրգռվելուց մեր համայնությունում երաժշտական մեծ բարմուքյան հիանալի խթան եղավ: Ի՞նչ լիցքեր եք փոխանակում համայնքին:**

Տ.Գ.-Այս համայնքն ինձ գնահատեց որպես երաժիշտ ու մանկավարժ: Ես այստեղ կարողացա դրսևորվել նաև իմ սաների շնորհիվ: Մոռացված ու սիրված շատ երգեր համայնքի շնորհիվ կենդանություն առան, նորովի մեկնաբանվեցին: Խաչատուրյանների ընտանիքը մեծ ներդրում ունի հայ երաժշտարվեստն աշխարհին ներկայացնելու գործում:

**Լ.Ա.-Ո՞վ եք Դուք նվագելու պահին...**

Տ.Գ.-Դա մի ընթացք է, որում ես լիիրավ տեղ եմ ու ամբողջական, ես մեկն եմ, ով իրապես կարողանում է իր ընդունակությունները ներկայացնել ստեղծագործության շրջանակներում: Անհատական մոտեցումն էլ բաշխում են օրինաչափության սահմաններում:

Արվեստի աշխարհն այն միջավայրն է, որտեղ ես պատրաստ եմ նվիրալ կիներու մինչև կյանքիս վերջը...

## ԱՄՏԵՆ ԿՆԻԿ ԻՐԱ ՄԱՐԴՈՒ ԱՆՊՈՒՆ Է...

«Զեղնար աղբյուր» ֆիլմի նկարահանումներն սկսվել են 1969թ.-ին: Ֆիլմը ցուցադրվել է 1970թ.-ին:

Զեղնար աղբյուրի տեղի հայտնաբերման և վերակառուցման աշխատանքները սկսվել են 2018թ.: Մայնածեռությանը գործարար Արթուր Գալստյանի (ծնունդով Վահրամաբերդից) և արևակոթից Երևանի մարզի Վահրամաբերդի համայնքի բնակիչներ Զանկետ Գևորգյանի, Սամվել Գալստյանի, երևանաբ-

նակ Վրեժ Պետրոսյանի և էլի սրտացավ մարդկացի:

Աղբյուրի պաշտոնական բացումը տեղի ունեցավ 2018թ. հունիսի 10-ին Վահրամաբերդի ձորում: Բացմանը ներկա էին ֆիլմի օպերատոր Լևոն Արուստյանը, Զեղնարի դերակատար Յուլյա Ռուստամյանը (բնակվում է Ֆրանսիայում), Երանոսի դերակատար Զակար Ազիզյանը, ֆիլմի երաժշտության հեղինակ, կոմպոզիտոր Ռոբերտ Ամիրխանյանը, Սոս Մարգարյանի դուստրը, թոռնուհին և այլք:

Ֆիլմի կոլորիտային մասն ապահովելու համար նախածնողները որոշել էին, որ վերոնշյալ արվեստագետները պետք է մոտենան աղբյուրին Գյումրվա ֆայտոնով: Այդպես էլ եղավ: Աղբյուրի հարևանությամբ ունենում տակ փոշած սփոռցի վրա դրված էին գյումրեցի վարպետների խրախճանքի մասուրքներից (լավաշ, պանիր, սոխ և գինի), ինչպես և ֆիլմում էր:

Վերակառուցված Զեղնար աղբյուրի սառնորակ ջրից առաջինը խմեց Լևոն Արուստյանը, սպա արյուրին մոտեցան Զա-

կար Ազիզյանը, Յուլյա Ռուստամյանը և ԱՅԼԸՍ-ՐԱԼՔԱՅԻՆ ՍԻՐՈՒ ծառայի միջոցառման հազարավոր մասնակիցներ...

Բարի վայելում... Կազմակերպիչները որոշեցին, որ այդ օրը կոչվելու է «Զավատարմության և ընտանիքի ամրության օր», որ նշվելու է ավանդաբար:

**Զանկետ Գևորգյան**





# ԷՐԳԻՐԸ ԿՈՐՅՐԱԾ ՄԵՐ ՓԵՍԱ ՄԿՐՈ ԱԶԱՆԸ

Իմ մորաբույր Սիրանը տարին-տասներկու ամիս ծեծված-ջարդված կողովակառույց էր տնից փախչում - գալիս էր հորանց տուն, վաշխված մի կերպ մատուցում մեր կալի քարե ցանկապատին, միգրանտ փեշերը տեղի-անտեղի բաշքշուռ էր ծնկներին ու հացախմորից մաշված, ծալ-ծալ ծոծուկած մատները մեջ բաշխի-նակը ճմռթելով, աղի-արցունքից շաղկված հայացքը հառում էր գեներին:

«Իյա», ի՞նչ ո՞ւրդից բուսավճարան տեսնելով, հանկարծակի գալով՝ զարմանում էր Սունե մամե-աղջի, Սիրան, էլի ծեծվե՞լիս:

«Դատասխանե՛ս ակնհայտ էր, ու մամա շարունակում էր շարունակելի»:

«Կա՛յ, գաղթականի՛ տղա, Սկրոյի ետքցուկ Ազատ, մեր տուն կերուկ աղուհացն քու քրեմ ու պնչն գա: Աղջի՛, ջանդի վրեժը ջարդե՛լ է:

Սունե մամա ավելի համոզված լինելու համար՝ իր հալած-համագած մատներով փորձում էր տևողել Սիրանի քվայացի անվճար մնացած դեմքը, բայց մատները անխիստ հայտնաբերում էին կամ հոնքամեջի պատուովածը կամ էլ այտերի կապտուկները:

«Կա՛յ, գաղթական Սկրոյի՛ տղա, բոյոյի բրոժ, անվա կտավ՛, ծեծներդի ջարդին, ունուզներուցդի կախվին: Աղջի՛, ի՞նչ ի՞նչ է՛ գարկի, ի՞նչ է՛ գարկի: «Կարոցով, մարե, վարոցով, հազիվ մըմնջում էր Սիրանը:

Սունե մամիս անեծքի պաշարը, իհարկե, չէր սպառվում, բայց մորս ու հարևանների մեկի-մեկի հավաքվելը մամիս ծայրերը քանձր անեծքներն առ գաղթականի տղա Շուռ Ազատն ու իր յոթը պորտը, աստիճանաբար քուլամալով, վերածվում էին մըմնջ-մըմնջների:

Մայրս ու քեռակին համունը քրոջ-մրջոցներ էին դնում Սիրանի կապտուկներին, երբեմն էլ թուր հասնում էր կտրվածքների բունմանը և երկի դրանից էր, որ Սիրան մորաբորոջ մեջք ու քիկուկներին մշտապես խաչկապ էր արած բողե շալը:

Մինչ կնամիք չանչ ու անեծք էին հղում արդեն չորս քե հինգ երեխա վատապաճ Շուռ Ազատի ուղղությամբ, Սիրանը հեզ ու խոնարհ, ծեծված-ջարդվածի հնազանդությամբ՝ մի շաքաթ կերուկում էր անում հորանց տանը:

«Կիր օր դիմանա, խո ի՞նչ վերջինը չէ՛:

Մի քանի օր Սիրան մորաբորոջ հորանց տան վայելքը երբեմն պղտորվում էր իր երեխաների մասին հիշատակումներով, մկա մատղաշ երեխեքսի հ՛նչ էլան:

«Գրող դիպավ, բան լէ չեղնի, ըրոնք ծուռ սասունցու տամազ-դին, մըվախնա,- քախտին պառկած Սիրանի քրոջոցները փոխելով՝ հերստում էր քեռակին»՝ Անավը: Բայց Սիրանի մախմուր - ճնոթված այտերից արցունքը գուլ-գուլ ծորում էր: Այդ շաքաթվա ընթացքում Սկրո Ազատի հետքն իսկ չկար: Նա լավ գիտեր իր գալու ճիշտ ժամանակը, գիտեր, քե շաքաթվա որ օրը Սիրանը ոտքի կե՛նի: Դեմք այդ օրն էլ մի ձեռքում ուռեմու օժակաճաշ ճիպուղ ճոճելով, մյուսից մի պուլիկ քան, վրան մարգարտափայլ մի գունդ կարագ լող տալով, շնչակտոր հայտնվում էր քեռանց շեմին: Խոշորակազմ էր, ժայռաքարի պես անշարժ քիթ-նուռով: Ներս էր ընկնում քուրքի գուլի պես, Սիրան, որ՛ի իս-՛ նրա ծայրից մեքն ախաարտու փախչում էինք, իսկ, նա, շարունակելով փնտրտուքը, դեմ էր առնում համուն քեռեկնակա ռիսակալ լուռյանը: Այստեղ էր,

որ ուրուր տեսած թխասմոր նման որևէ տեղից հայտնվում էր Սունե մամա ու կատաղի հարձակումն անխուսափելի էր:

«Թուրքի գուլլեն քո սիրտ բռնե, Ազատ տղա: Չեռներդի չորհան, կախվին կողերուցի,- և մամիս ծեծնափայտը ճոճվում էր օդում:

Այդ պահին էր, որ հրաշք էր կատարվում:

Եվ նրա ծայրը անդուրը գլորվող ջարաքեկորների նման խուլ դիվանգուլ գրիվ էր գալիս օդում:

«Օտներդի պագի՛, մամիկ ջան, գարկ, գարկ, դինջացի:

Մամիս ծեծնափայտը մի երկու անգամ անգոր դիվանգուլ էր քարաժայռի մեջքին, հետո խաղաղվում,- չըմիտա Սիրանին, ետ դառի, գնա քու քամբախ:

Դեմք այդ ժամանակ էր, որ տոտիկ-տոտիկ մոտեցնում էր ապաքինված Սիրան մորաբույրս ու կիպ կանգնելով ամուսնու գլխավերևում, գողունի մի հայացք էր գցում Սունե մամիս կողմն ու մըմնջում:

«Մարե, մարդի ծեծ, վարդի ծեծ:

«Դա՛, դը արի գնա քու քամբախ,- մամիս գալույցը գազաքանակետին էր հասնում,- դու էլ ուր



պես անմամուս իս: Գնա, բայց մեկ էլ օր ծեծուկ-ջարդուկ էկար, ի՞նչ դուռ չբանա:

Քիչ հետո գաղթական Սկրոյի տղա մեր փեսա Շուռ Ազատն ու Սիրան մորաբույրս հաշտ ու քարիչ, խաղաղ գրուցելով իջնում էին դարն ի վար, իրենց տուն: Նրանց ետևից միանգամից խաղաղված մամա տխուր-տխուր գուլխն օրորելով կատու էր:

«Վար ի՞նչ Ազատի պապեր ծուռ սասունցի ին, էրոնք առանց կուլի չընկնեց ասրին, լատ, մի-նակ քե ուրանց էրդի ի՞նչ թորկեցին, չըմ հասկնա,- ու մեզնից չէր բաքցնում աչքերի քաջը:

ՇՆՈՐԴԿԿ  
ՇԱԳԻՆԱՆ

## ՅԻՄԱ ՆՈՐ ԵՄ ՀԱՍԿԱՆՈՒՄ

### ԱՍՄԱԿԵԼ ՄԿՐՏՉՅԱԼ

Օձունից չըջկենտրոն էինք վերադառնում:

Մեր ուսանող ընկերներով էինք: Ուրախ մի խումբ: Տղա ու աղջիկ: Ավտոբուսը հին, դեղին գույնի, ռուսական արտադրության «ՊԱՁ» էր: Կտուրի վրա, ողջ երկարությամբ անկյունակներով մի ինքնաշեն վանդակ էր գողված-հարմարեցված, ինչի մեջ վարորդը՝ գյուղացիների ու շաղիր դիտողությունների տակ, հարմար դասավորել էր նրանց բեռները՝ հավ ու հավիկթ, միրգ ու հատապտուղ, պարկերով բանջարեղեն, կպպոցներ ու հիմա չըջկենտրոն էինք վերադառնում:

Օձունի վանքի մասին վարուց էինք լսել: Լսել էինք, որ պատմական Զայաստանի վաղ քրիստոնեական ամենահին կառույցներից է, որ այնտեղ է գտնվում Սմբատ Բագրատունու գերեզմանը, որ օղակված է անուամներով ծածկված լեռնալանջերով ու ուղղակի հրաշք է:

Բա կլինե՞ր, որ մամա երեւելի վայրը մեզանից պրծներ: Ու քե միջն է հիմա այն ցաւ նրանով էր հայտնի եղել, որ Մեսրոպ Մաշտոցը այնտեղ դպրոց էր հիմնել, ու իր ստեղծած այբուբենով հայերեն էր սովորեցրել, հիմա արդեն առավել ևս նրանով էլ հայտնի դարձավ, որ մենք էլ ենք այստեղ եղել, նայել ենք մամուռ բռնած ու վկայք բույսեր անած պատերին, շնչել ենք տեղի օդը, սարսուռ ենք ժամանակի շնչի գեղարարությունից ու զնայվել բնությանը:

Սեպտեմբերի վերջն էր: Օդը՝ տաք, վանքը՝ շշմեցնող, բնությունը հեքիաբային:

«Մրա, ես ի՞նչ լավ, պաղ պիվա խմելու տեղ է,- փորձեց կատակել մեր տղերքից մեկը, երբ վանքի ներսում էինք:

Սիրողության պատճառով

փա էինք գնալու, էլի: Մեզանից մի քանից շուռ եկավ նրա կողմը, վարորդը փորձեց հայելու մեջ տեսնել, քե այդ ով էր ու ի՞նչ ասաց, իսկ մենք առանց խոսելու նայեցինք իրար, ապա՛՛ ով ում պատահե՛ր:

Ես ավտոբուսի մեջտեղում



ստունություն կար ներսում ու ակնածանք, ու մեր ընկերոջ անհաջող կատակը չարտահայտված գայրույթ էր առաջացրել: Նա միշտ էր այդպես, իր սրամտում էր, բայց իրակամում իր ասածի ձեռքը կրակ էր ընկնում: Գիմա նա մտել էր ավտոբուսի վերջում ու մի քանով գրաղված լինելու համար, մեր մյուս ընկերների հետ «բլուտ» էր խաղում:

«Վարպետ, կարգին քի: Չորս վալետ են ցույց տալու,- ընդհանուր ժխորի մեջ երևալու անմիտ փորձ արեց մեր ընկերը, ու միայն ինքը հռեռաց: Մեր խմբին չէր հաջողվում համակ մի տեղ հանել, տեղ էինք գտել ով որտեղ պատահի, մի ժամ ճամ-

ալիքավոր մազերով, շոկոլադի գույնի կարճաթև շապիկը հագի, ամեն մի շարժման հետ զգում էի մկաններս խաղը, ու քեռակի էի բռնել դիմացի նստարանի թիկնակի կողից, որ ցատկ ցատկելով չգնամ, ինձ թվում էր, քե մի փոքր էլ եթե սնձեմ՝ կան կպուկեմ բարակ խողովակը, կան էլ կլորեմ: Դե-տու էլ ինձ հաճույթ էր պատճառում արդեն խոսելիս ցույց տալը, որ լեռնակաճից են: Մեր մի քան անգամ ուրախացնող էր:

Մեր ուսանողների մեկը գողունի քեքած գուլխն ու չարածնի ժպիտով նայեց ինձ:

«Չէ՛, մատաղ: Ես Ավավերուցն եմ:

Զարևանս դեմքը չփոխեց, ու ես չհասկացա՝ նա հառաչե՛ց, քե՛՛ ի՞նչ հարցին պատասխանեց: «Սստեղ բարեկամի տո՛ւն էիր էգել, քե՛՛...» չուշացավ իմ հարցը:

Ես՝ արդեն դիտավորյալ, ամուր ու ձիգ մտել էի իմ տեղում ու ձևացնելով, իբր քե գուլխա երկարացրած, փորձում եմ դիմացի ապակու միջք ճանապարհի ոլորտներին հետևել, գիտակցում եմ, քե իմ երկմաստ հարցն ինչ անախորժություն կառաջացնի ու դժվարությամբ ժպիտս զսպելով, աչքի պոչով հետևեցի հարևանիս: Մեր ընկերուհիներից մի քանիսը փոքկազին, այն մի աղջիկը նազանքով քեքեց գուլխն ու ժպիտ-հանդիմանաբով նայեց ինձ: Մյուսներից՝ տեղացիներից, որը չլսելու տվեց իմ հարցը, որը պարզապես մպտաց. անմեղ ու հաջողված

կատակ-հարց էր:

Զարևանս շարժեց շուրթերը, նրա սպիտակած հոնքերի տակից աչքերը դժգոհ ու ծուռ-ծուռ նայեցին ինձ: Բավականին երկար լռելուց հետո նա ընդամենը դառը փնջացրեց:

Նման շարունակությունը նրան գրույցի ներբաշելու իմ տրամադրության մեջ չէր մտնում: Դադարելով ձևացնել, քե դիմապակու միջից դուրս եմ նայում, ես չըջկեցի հարևանիս կողմը:

«Դոպար, հմի գուզեիր օր ջահել եղնեիր, օր...» ես ուզեցի շարունակել քե այսպիսի սիրուն աղջիկների հետ ճամփա գնալ, բայց երբ տեսա այն աղջիկն ինչպիսի լայն ժպիտով նայեց ինձ, այն չարունակեցի հարցս: Ներքին հրճվանքով նայեցի հարևանիս:

«Չէ՛, մատաղ,-բավական երկար լռելուց հետո տնքաց հարևանս,- ես շատ ծանր կյանքով եմ ապրել: Դառը: Զահեկանալ չեմ ուզում: Չէ՛: Մեռնել եմ ուզում: Դա էլ ինձանից չի կախված, մատաղը լինեմ: Ի՞նձանից չի կախված: Կհավատա՞ս, կյանքիս վերջ կտայի, բայց վախեցնում եմ, քե դա էլ կարող է ավելորդ խոսքերի պատճառ դառնալ:

Գիմա նոր եմ հասկանում այն ծերունուն... Գիմա նոր եմ հասկանում...

Ես՝ քանակից տարեկան,



# ՏՈՒ՝ ԱՐՏԻՍՏԻ ՃԱՆԱՊԱՐՅՈՎ...

(ՀՀ մշակույթի վաստակավոր գործիչ, ռեժիսոր Սիրանուշ Դուկասյանի ստեղծագործական գործունեության 50-ամյակին)

50 տարի. սա շա՛տ է, քե՛ն՝ քիչ... Այս պարագայում չափորոշիչներ չկան. ամեն ինչ դուրս է բոլոր իրական ստանդարտներից...

Երկար սպասված հանդիպումն այս ձևաչափով վերջապես իրականություն է: 2018 թվական, Գյումրու մարզաձևակութային կենտրոն... Երեկ... Բեմում Սիրանուշ Դուկասյանն է...

Բեմում Սիրանուշ Դուկասյանն է՝ 20-ամյա արտիստի նշանը ու ավուհը, քեմել այնպիսին, ինչպիսին նրա 50 տարիներից յուրաքանչյուրն էր, ինչպես ստեղծագործական գործունեության յուրաքանչյուր ակնթարթն էր սպառված ու ասրեցնող...

Հանդիպատե՛ք ևս մեկ անգամ հիացմունքով վայելում է նրա անկրկնելի խաղը, իսկ արտիստի հոգու լույսը տարածվում է ոչ միայն բեմում ու դահլիճում, այլև բոլորի հոգիներում...

Երբ հորեյանական երկոյից ամիսներ առաջ գրուցում էինք բեմը այս օրվա մասին, իբրև մտերմական գաղտնիք նա նշեց,

որ ամենակն չի պատրաստվում այդ օրը բեմում լինել ոչ ակտիվ: Ավելին ճշտել չցանկացա. չէ՛ որ նրա մարդ տեսակին է բնորոշ ասվածը: Սպասում էի արտիստի ակտիվության այս հերթական դրսևորմանը: Իսկ նա ներկայացավ սպասելի ու բոլորովին անսպասելի կերպարով՝ նախ կանացիության ու կնոջ տասնամյակներով չափվող կենսագրությունը մեծցող իր տեսակով, և ապա՝ ճեմնակ իբրև բարություն, նաև բարեգործության անցած ճանապարհը զուցե ակամա ընդգծող խորհրդանիշ:

Իսկ երբ իրեն շնորհավորողներից յուրաքանչյուրին նա «Դու էլ անցնես այս նույն ուղին» էր մարտում, գիտակցում էիր, թե որքան հզոր են խոսքերն այդ, և որքան կարևոր արտիստի համար անցած այդ երկար ճանապարհի ամեն մի օրը...

«Սու՛ն բատրո՛նն իմ տարերքն է», - մի առիթով ասել է դերասանուհին: Ե՛մ ահա մոտ բատրոն, միայն իրեն բնորոշ համուռոտով

գրույց բոլոր հանդիսատեսներին հետ ու յուրաքանչյուրի հետ առանձին-առանձին: Իսկ երեկոյից յուրաքանչյուր անց մեր գրույցում Սիրանուշ Դուկասյանը հաստեղծական և իր համար ամենակարևորը համարեց հենց այդ իր և հանդիսատեսին, բեմի ու դահլիճի ջերմ, այնքան ամփոփական կապը, անկեղծ ծափերն ու լուսավոր հայացքները, որոնք ուղղված էին ու մշտապես ուղղված են եղել արվեստագետի սիրտն ու հոգին: Նա այն կինն է, որ ամբողջ հինգ տասնամյակ ապրել է ստեղծագործել է հանուն այդ լույսի ու ջերմության այդ նույն լույսի ու ջերմության մերք:

Յոթ տասնամյակն անցնող նրա կենսագրությանը զուցե ակադեմիական հերթագայությանը չամոքարառնանք, ավելին, միտկան էլ չենք դրան, սակայն կան վատեր, որոնք պարզապես մի-մի փարուսներ են, հուստ փարուսներ, և արժե թժարելը դրանցից մի քանիսը՝ ստեղծագործական գործունեություն Գյումրու տիկնիկա-

լին թատրոնում, «Հուստ փարուս» հոգեբանական կենտրոնի հիմնադրում, Արցախյան պատերազմի թե՛ օրերին հոգեբանական և մշակութային հենարան հայի անկտրոնում ոգուն, դպրաթատրոն Գյումրիում նույն «Հուստ փարուս» անունով, այսօրվա գործունեությունը՝ այսօրվա և վաղվա բեմի համար, երկարատև մանկավարժական-դասախոսական գործունեություն Երևանի կինոյի և թատրոնի պետական ինստիտուտի Գյումրու մասնաճյուղում, բազմաթիվ ներկայացումներ, ու նաև նրա արձակագրի տաղանդի վկայությունը՝ արվեստագետի գրական-ստեղծագործական գործունեությունը:

Երկար կարելի է թվարկել, բայց այս մասին անդրադարձը թողնում ենք ևս մեկ բարեպատես առիթով: Իսկ հիմա գրելով միանում ենք հնչած և հնչող բոլոր շնորհավորանքներին և ավելացնում, ինչպես արտիստուհին բեմում ԱՊԻՆԵԼ...



## ԱՅՐՎԱԾ ԿԵՆՂԱՆԱԿԵՐՊՈ՛Վ ՃԱԿԱՏԱԳԻՐ

«...Խաչի՛ Ամենափրկչի Խաչի օծման օրը իր չննա-ցությամբ, բայց վերին մի քնալորանքով՝ երկու հազար տասնչորսի հուճիսի քսանմեկի եղբոր ծննդյան նույն երկու հազար տասնչորսի հուճիսի քսանմեկի օրը պիտի հայրենիքի քաղաք հասներ նախ...», - հետևյալ էջված է Սաբենիկ Մկրտչյանի «Այրված կենդանակերպ» վեպում: Միայն այդ նույն օրվափն չորս տարի է ուղիղ երկու օր անց հանդիպում են Գյումրին, Սաբենիկ Մկրտչյան գյուղնեցին ու նրա գիրքը նաև նույն հարազատ բնօրրանի մասին, որի կյանքը ճակատագրորեն ու ժամանակագրորեն երկատված է արդեն 30 տարի երկարաշարժից առաջ երկարաշարժից հետո այլևս անշրջելի բաժանումով:

Հանդիպումը Գյումրու գեղագիտության ազգային կենտրոնում էր: Շուրջ մեկ-դարյա իրադարձությունների /1915-2015/ պատմական-ժամանակագրական զարգացումն ընդգրկող գրքի շնորհանդեսին ներկա էին նաև գրքի հերոսներից իրական անուններով ու դեմքերով, նաև գրողի մանկության, պատանեկության և բոլոր ժամանակների ընկերները, մտերիմներն ու գոչընկերները, մարդիկ, որոնք իրենց գոյությանը, հոգևոր ուրակն ենեղծաբար մղել են նրան արարելու ու կյանքի կոչելու մի գործ, որը իրեն տրված արժեք, արդեն պահ է սրվել դարերին արժանի տեղ գրադրեցնելով ժամանակակից արձակի լավագույն էջերի կողքին:

Գրքի վերաբերյալ իրենց կարծիքներն արտահայտեցին դրամատուրգ, ՀՀՊ պաշտոնաթերթի «Գրական քերթ»-ի գլխավոր խմբագիր Կարինե Խոջիկյանը, գրող, հրապար-

կախոս, ՀՀՊ արձակի բաժնի վարիչ Ալիսա Հովհաննիսյանը, արձակագիր Սեյրանուհի Գեղամյանը, գրող, հրապարակախոս Նանեն, Սիլվա Կապուտիկյանի տուն-թանգարանի վարիչ Արմենուհի Դեմիրճյանը: Խոսելով վեպի մասին նրանք բոլորն էլ շեշտեցին գրքի գլխավոր արժանիքները՝ վիպական կուռ հյուսվածքը, հեղինակի բազմաշերտ մտածողության խորքը խոստով «կողերով», ասելիքի կարեւորությունը ու հարստությունը, լեզուն և ոճը: Հնչած շնորհավորանքներին ու գնահատականներին միացան նաև գյուղնեցի մտավորականները՝ Գյումրու գեղագիտության ազգային կենտրոնի տնօրեն, ՀՀ մշակույթի վաստակավոր գործիչ, Մկրտչյանի Սուսաննա Մկրտչյանը, գրող, թարգմանիչ Արա Արքայանը, գրականագետ, բանասիրական գիտությունների թեկնածու Կ. Մարտիրոսյանը: Հանդիպումը վարում էր ՀՀ մշակույթի վաստակավոր գործիչ, ռեժիսոր Սիրանուշ Դուկասյանը, որը նաև ըմբերեց գրքն անփոփոխ խորհրդանշական հատվածը:

**Ճակատագիր «Կենդանակերպ»-ի մի պտղունցի մեջ... /Սաբենիկ Մկրտչյան, «Այրված կենդանակերպ», Եր., 2017թ./**



Մարտունեցիի, բազմահազար սարսուռների վազելն այլևս անհնար է սանձել և, նույն անգուսպ պոթեթմանը տրվելով, դեռ ընթերցել չակարատած, ձեռքս ակամա մեկնում են գրչին...

Սաբենիկ Մկրտչյանի այս գործի դեռևս առաջին գրքին են առիթ ունեցել են անդրադարձնալու, և մեկ անգամ հնչեցնում են խոսքի անկախ ժամանակից, քանզի իրականում այս գործի համար չկան ժամանակային չափումներ. ներկան, անցյալը, ապագան, բոլոր երեք չափումներն այստեղ են մեկ տողում, մեկ պարբերությունից մինչև ամբողջական էջերի հասնող նախադասություն-մտքերում: Կերտնում են տրամաբանության և մտածողության բոլոր սահմանները, միանգամից, միաժամանակ, տողերում, տողաբանությամբ, միջանկյալ մտքերում... ամենուր ավում է ամեն ինչ՝ մեկ շնչով, բառերի միաձուլ շղթայով...

Հայկական մի մեծ տոհմի մեկ ամբողջական ժամ արձաններից՝ ճյուղ և մյուղ, տերև և տերև, ու չին և ոչ մեկի բացակայությունը... Ճակատագրորեն, որոնք այս մեծ տոհմին են բնորոշ և յուրաքանչյուրի հային են, ամեն մեկին, ու՛ր անցել է 1915-2015 հարյուրամյա ուղին եթե ոչ ֆիզիկապես, ապա, անկասկած, գեներով, արյունով, ոգով... Մա մեծ հաշվով հայի ճանապարհն է՝ իր գեներով ելող յուսավոր ու երկուդած հավատով, հույսով, տքնաջան աշխատանքով: Մա հայի ուղին է՝ բյուրեղացած մեկ տոհմի ավազանագույնները: Երեկոյան հեջիսպներ, մաքրամաքրու, զուգված հայկական կողբիտ, և «հավերժո՛ղեն Մուկանյան ճակատագիր ու փորձով խելքի չելող, խաբվելու պատրաստ հավերժո՛ղեն դյուրաբաժան մարդիկ, դյուրաբաժան երկիր, դյուրաբաժան ժամանակներ...», բայց և անգնահատելի արժեքներով, արժեքներ, որոնք մարդ իրավունք չունի կորցնելու՝ «մարդկանց, գրադարանը և այս հողը, մեր հողը», իսկ մնացածը կարելի է ստեղծել բրտիքերով, ինչպես եղել է միշտ... Եվ ամեն տեղ ու ամենուր,

ամեն մի անկյունում, ասես ամեն մի անկյունից դառն քմծիծաղը շուրթերին ծիկակող մի ճակատագիր՝ ճա-կա-տա-գիր... «Իմ ընտրյալների վերջն այդպիսին չի լինում. ոչ այդքան շուտ և ոչ այդքան հեշտ»: Ուրեմն, մի կողմից՝ մեկդարյա իրականություն, մեկ ուրիշ կողմից՝ այդ ամենի խտացումը փոքրիկ, այսօրվա Գյումրի քաղաքում և կամ քնայն հանրամարտի վրա՝ հայրենի ծննդավայր, բնօրրան, և ապա հավաքական կտավ տոհմածառի պատկեր... Լայն առունով այսպես կարելի է քաղաքում, որն իրականում իսկական մի հյուսած ստեղծագործություն է՝ բազմաթիվ ու անհաշվելի, անծայր թելերով, բայց միախուս ու կանոնակարգված, բերված խիտ որոշակի օրինաչափության: Եվ այդ ամենին գալիս է գունարկելու պատմիչի ոճը, ոճական հնարներ, որոնք գործը վերածում են պատմության... Տոհմի պատմության գրված փորձառու պատմագրի ձեռքով:

«...Կամ մեր կարողությունների ներածին չափով՝ ծայրահեղ լավ, կամ ոչինչ: Միայն կյանքի նկատմամբ իմ... Եվ ոչ միայն իմ, նաև իմ հավատածը՝ կրեդոն...»,- նաև և գուցե թե այստեղից է սկիզբն առնում «կյանքի հորձանուտը ինքնակամ նետված» գրողը, որը առաջին գրքի վերջում դեռ չորսամյա մի աղջնակ էր, և հիմա անցել է շուրջ վեց տասնամյակը: Նաև այստեղից են գալիս հեղինակի մախրող և այս գրքերի միասնություններն ու տարբերությունները, երկրորդն առաջինն առանձնանում է մեղ-ամենակալանի, այստեղից էլ մարդը ինքնա կենսագրականի տարբերված: Ուշագրավ են իրադարձությունների հերթագայությունները հար նույն պատմականության վավերական կազմառնելը՝ 1915, 1918, 1920, 1937 ու... 1988...

Օրապատում. գուցե և այսպես է տարբերվում երկրորդ գիրքն առաջինից. հերոսի հուրաբանը և այս հողը, մեր հողը», իսկ մնացածը կարելի է ստեղծել բրտիքերով, ինչպես եղել է միշտ... Եվ ամեն տեղ ու ամենուր,

զո գտնելու մեծ ցանկությամբ, և գտնում են: Այսպես, հայտնագործված է օրինաչափությունը. պարտավոր են ընթերցել սեփական մտքի ուժը հնարավորին ամբողջությամբ օգտագործելով հակառակ պարագայում բերի կրկնակի հեղինակի մտքի ուժը:

Եվ ապա՝ ավարտ... Փակում են գիրքը, աչքիդ առջև կրկին հայտնվում է նա՛ վեպի հերոսուհին՝ նախա-նախատատերի գեներտիկ հիշողությունն իր քեջեջներում ամբարան կորող լուռ հնազանդ ճակատագրին, ամոտս ենթակա այրված կենդանակերպի ընդամենը մի պատույց մոխրափոշու հրամաններին, նա... օրերի հիշողությամբ, օրեր, որ գլորվելով վերածվել են տարիների մեկ, երկու տասնամյակի դաժնալուր զուրի մեկդարյա անհերքելի ու չիտրեվող կյանքի ընթացքի բարձրալայն... լուրջ վկան... Միայն և վերջ, բայց և գուցե թե մեկ այլ սկիզբ դարավոր ու հաստատուն ծառից ծնվող-կյանք առնող ճյուղերից են մեկի...»

Պայմանական այս տարանջատումն իբրև սահմանագիծ չի ծառայում, այլ մի տեսակ ամբողջանում և ավելի ակնհայտ է դառնում տոհմի կոնկրետ այս շառավղի պատմությունը՝ առաջին դեմքով և, ինչպես ասում են, առաջին ձեռքից, թեպետ արդարացի լինելու համար պետք է անպայման շեշտել այն կարևոր հանգամանքը, որ առաջին գիրքն արդեն իսկ անփոփոխ էր, և վերջին ու վերջնեցի պարբերություններում ակնհայտորեն զծագրվում էր հաջորդ սերունդի ուղին և հասկապես՝ գլխավոր հերոսուհունը՝ մի պտղունց-իուկե խորհրդանշական ճակատագրի խնդրանքներով: «Աստված իմ, ինչո՛ւ՛ մոռացավ Սիրանուշ բոռան համար բաժին վերցնել հենց սկզբից...»:

Բան. գիտ. թեկնածու ԿԱՐԻՆԵ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ 11.05.2017թ.





Ծաղկածորյան խոհեք

Le ciel est, par-dessus le toit, Si bleu, si calme! Un arbre, par-dessus le toit, Berce sa palme.

Երկինքը տանիքների վրա այնքա՛մ խաղաղ է, այնքա՛մ կապույտ...:

Պոլ Վերլեն

Պոլ Վերլենի հիշյալ տողերը և բնագրով, և քարգանաբար արտասանելով չճեղքող բանաստեղծ շտապեց հագնեցել իր շուրջը հավաքված և իրեն անկլավ դարձրած երիտասարդ գրողների աչքերից հորդող հետաքրքրության ծաղաղը... Արտեմ Դարությունյանն էր: Պոլ Վերլենի իմպրեսիոնիստական պոեզիայի երաժշտականությունը, արևի լույսից դողդողացող մեյլանխոլիայի շղարշն ու բնապատկերները հափշտակում էին հատակին նստած գրողներին ներկան ու տանում իրենց խորքով: Փարսնային բույրով ներծծված տանիքներն ու երկինքը Վերլենի էության ու աշխարհի երկխոսության են, իսկ ո՛րն է մեր ժամանակակից երիտասարդ գրողներին երկխոսությունը: Յուրաքանչյուր ժամանակաշրջան

արժեքների համակարգում վերադիրավորում է մարդուն, իր հերթին մարդն էլ արարում է իր ժամանակաշրջանը, որտեղից նա դուրս է բերում իր առանցքն ու պատվում դրա շուրջը: Ստեղծագործությունը հենց վերաբերմունքն է իր, առանցքի և մյուս արժեքների հարաբերակցության նկատմամբ: Արարման ընթացքն ունի իրեն ներհատուկ օրինաչափություններ: Սիս այս օրինաչափությունների եզրերը մենք փորձեցինք շոշափել և ինքնամեկնաբանությամբ ժամանակի խճանկարն ամբողջացնել վերջերս Ծաղկածորյան կայացած երիտասարդ գրողների 16-րդ համաժողովի ընթացքում: Արդեն առաջին իսկ օրերին կարելի էր ենթադրել, որ «խճանկարի» ֆրագմենտալ բազմազանությունը, ոճական նորարարությունները, նույնիսկ նորարարության նույնությունն ապահովելու էին եռօրյա համաժողովի թե՛ ընթացքը: Գրականությունն այն իրականության մեկնությունն է, որը խնել է ստեղծագործող իր դրամայի ետնաբեմում, հետևաբար ամեն ստեղծագործող գրեթե միակ

գործող անձն է իր դրամայում, իր գայարաններով է շոշափում աշխարհը, դրա գարկերակն ու տոնայնությունը, և հենց ստեղծագործողի բառով է մարմնամուտ իրականության սուբյեկտիվ զգացողությունը: Թերևս սա էր պատճառը, որ բախվեցին ոչ միայն գրողների ու գրականագետների իրականությունը, այլև սերունդների, ի հավելումն նաև ստեղծագործողների ներառման այն բախումները: Անցկացվող գրական ընթերցումները թույլ տվեցին վերլուծել և մեկնաբանել ստեղծագործությունները: Զննարկումները երբեմն վերածվում էին երկխոսության տեսական հիմնավորումներով բացահայտելով գրական ստեղծագործության հաջողության բանաձևը կամ ծախողումների հիմնական պատճառներն ու թերությունները, իսկ երբեմն էլ թռիչք էին կատարում դեպի դարձբանականների կամ դիֆիրանսների ժամը ինչ-որ տեղ պայմանավորված անձնավորման ֆեոնոմենով: Դանձադողված արծարծվեց ռեալիզմի ու ռեֆլեքսալացման, դրա հնացման վերաբերյալ հարցերը համարելով, որ



արդի փուլում ամեն ստեղծագործող անկախ ժանրից իր հետ բերում է նոր մեթոդ: Կարևորվեց մշակութային դիրքին համընթաց քայլերու անհրաժեշտությունը, քանի որ ի վերջո արդի իրականության բեկադրանքով են ստեղծագործություններն արժևորվում կամ վերաբեկվում գոյություն ունեցող իրականության մեջ կամ դրա համապատկերում:

Ուշագրավ էին այնպիսի հարցերի արծարծումը, ինչպիսիք էին պետական հովանավորության գրատպությունը, զրքի պոլիգրաֆիական որակը, գրական մամուլում երիտասարդների գործերի տպագրությունը, տարատեսակ գրական մրցույթների կազմակերպումն ու գրողներին վճարվող հոնորարների խնդիրը:

Չափազանց հետաքրքրական էր ընկալել հայաստանյան գրական ընդհանուր միտումն ու առանձնահատկությունները: Այո, գրողն այժմ կարող է խոսել անկաշկանդ, չկան սպառնալիքներ ու արքունիք, չկա գրաքննություն, սակայն ոչ պակաս կարևոր է ինքնքրանադատության հատկությունը չկորցնելը, ինչը չեզոքացնում է լճացման վտանգը, քանի որ վիրտուալ հարթակներում և գրական մամուլում արտահայտվելու լայն հնարավորությունը կարծես թե անտարբերություն է առջե բերել գրականագետների քննադատության նկատմամբ:

Խանդավառությամբ պետք է փաստեն, որ հայ գրական իրականության բազմազան սպեկտրում նշմարվում են պայծառ ու մտքի ինքնատիպ ուղղությամբ առանձնացող գրողներ, որոնք զուցե առայժմ չեն ինքնագիտակցվել կամ սահմանվել իրենց արարմամբ, սակայն վաղը վստահաբար քայլերու են համաշխարհային գրականության դիրքին համընթաց...:

ՆՈՒՐԻ (Լորեսա Մուրադյան)



ՍԱՐԻՆԵ ԴՎԱՌՔԱՆ

Ավարտել են ԳՊՄԻ-ի պատմաբանասիրական ֆակուլտետի «Դայրոց լեզու և գրականություն» բաժինը: Ստեղծագործելն ինձ համար հոգին պարարտացնելու մտան մի բան է: Պիտի թե՛ պահել հնոցը մտքերի, հույզերի, տաքացնել ազնվի ու ճիշտ զգացումներով, որպեսզի դրա արարման արգանքին էլ լինի անխալոթեն ջերմացնող: Ենթանակ թղթի և գրիչիս միջև կնքված խաղաղ դաշնության անսալթաբ հավատն է ինձ միշտ հուսավառում: Գրելն ինձ համար հոգու աշխատանք է:

\*\*\*

Բեզանից հեռու վայրկյանը դալ է, Լողացող մակույկ անհայտ օվկիանում, Առանց թեզ օրս հիվանդ, տկար է, Ծանր ու անմեկին լուռ դատարկություն:

Երբ չկա հնքը, թրթիռը կործեի, Ապրելու համար անբավ է օդը, Առանց արևոտ, կրակ աչքերիդ Ինձ ծվատում է անտեր կարողը:

Ժպիտիդ լույսից հրդեհվում են ես, Գեղվում հայացքիդ տաք ու խենթացած, Բո համբույրներից թև առած հոգիս Փրփուր ամպերում ճոճվում է արբառ:

\*\*\*

Գիշերվա մուրը գրկել է հոգիս, Սևին են տալիս երգաներս ամպոտ, Կրակն է պաղել վառվող աչքերիս, Ամեն ինչ ունայն, ու ամեն ինչ սուտ:

Ինչու՞ է պարուն լուսինը դեղնած, Խավար երկնքի տխուր հանդեսում, Երբ ասողերն անցած առած, կուչ եկած, Դազով պղտորված աչքերն են թարթում:

Երազիս թևը կտորվեց ցավոտ ճակարանքի ժամին բոցե հրծվանքի, Ու փայլատվեցին հույսերս արևոտ, Փարվելով գետնին անձայն մարեցին:

\*\*\*

Գինովցած կարոտս է մեղմիվ լողում Ավազանի մեջ քանճր գիշերվա, Լուսնի կաթնահոտ ափսեն փշրվում, Արծաթ շապիկ է հագցնում նրան: - Չգուշ, նազելիս, կոյուրվես հանկարծ Անխոս բառերի կախարհիչ մուփե, Սյրտեղից, ավա՛ղ, չկա վերադարձ Դեպի թո պատյան դեպի իմ հոգի:

\*\*\*

Անձև հպումից ջարդվեց հայելին, Դավառ-հայելիս ամիսաբ օրերի, Ցավը գրպանեց իմ ուրախ հոգին, Ծիծաղս մնաց սառույցին գերի:

Ու մութ կասկածի սարըը անաղմուկ Ոստայնը հյուսեց փոշու մտքերից, Վստահությունս դառնացած պրկվեց Օրերին կապված միակ պարանից:

\*\*\*

Բո հոգու արծաթե ջրվեժից Կայտանք են խմում աչքերս, Ու սիրուս ուռչում է հեշտագին, Ինչպես հասկը փթթող ամառվա:

Անխարդախ սեր է շիթում, Թևերիդ խելագար գրոհից, Բնջառն են բուրում ես հիմա, Թափվում շիկացած ավերիդ:

\*\*\*

Մի կանգնիր պաղ թրթիռ հուշերիս, Չարոված բառերով մի՛ սգա, Մեռածին հարություն չեն տալիս, Երևելանը այսօր էլ չկա:

Թող մեզի անցյալը անվրդով Մեր հոգու կիսաշեն խորանում, Չյան տակ մնացած հետքերով Վերադարձ այլևս չի լինում:

\*\*\*

Կիսավեր երգը, մզկահան սյուներ, Խեղդված ու չոր լույթյուն, Անեղիկ խոհեք, սպասում մոմե Ու մեղրը հավատ անկյունում:

Մի բաժակ աշուն ու մի տանուկ աչք, Անկրակ, ապակե միացում, Կարկաստված, թափառող հոգսեր, Խռովյալ, անդաշն հաշտություն:

Անշուք պատերին գունատ խոհերիս Վաղուց չեն կարող պատառ կացնել, Անզան հաստակն է ճաք տվել հույսիս, Երգաներիս տաք կտուրն է սառել:

Ու իր անճոռնի վայրի թաթերով Ուսերիս թառած ճիվաղն անտարբեր Ականջներիս տակ սղոցող ձայնով Երգում է անվերջ՝ չկա անկեղծ սեր:

\*\*\*

Թերթիկներիդ մեջ՝ քնջշության նվագ, Ու արբեցումի սիրակարոտ թույր, Խոնարիությունը՝ կնոջ հանդերձանք, Իմ խճճորների՝ հարսնացած իմ թույր:

Կաթե մաքրություն՝ թո ջինջ հայացքում, Դայրի կրծքիդ մտան կուսական, Սչքերիդ լուսե խորքում է ծաղկում Խայտացող հույսը իրաջ մայրության:

\*\*\*

Ենթանակ հույսեր նկարեցի Ցեխտոված մայթերին, Սուված ջրափոսերը կուլ տվեցին... Նկարս չավարտվեց:

\*\*\*

Թանճր կապույտ են մապերը մաղում, Աղոթք մրմնջում սարերը խոնարի, Խնկարոտյ օղ է պատարագվում, Որ արև ծնի առավոտն արդար:

Որ կարոտն ինքը երկինք ունենա, Աստղազի թերթին երագոր շարի, Մի որև մաքրություն հոգի վճանա, Անճառ բարությանը իր մխիթարվի:

\*\*\*

Դեռու՛ տար ինձմից Տարփանքով եփված պագշոտ բաժակը, Որ ցանկությունից ուռած թիթերով Արմուտված լուսնի պաղ, Երկուրդահան տազնապն է բերում: Կրքերի մոլի խառնարանի մեջ Բոցում է անդուր մի ճարճատյունով Բոց ստուկունների ցավը անարյուն:

...Կախաղանին տրված տեճեքը վավաշոտ

Դիմա քավարանի ոռոնցներն են ճոճում:

\*\*\*

Վախենում են ես, Ես վախենում են Անգույությունից թո ներկայության, Որը ծանում է անզուր հրծվանքով Ծամառակը իմ՝ Միակ հուղարկավորին սառած սերերիս... Ժպիտի ծիծաղով խճոռում է նա Իր չզդուրյամբ ներկա՛ս իմ օրը: Վախենում են ես, Ես վախենում են հենց այդ ծիծաղից, Դրա անկյանք արծազանքը Տարածվում է ավերակված Դուշերս շղթայող փշերի միջով:

Դեռվում կաղկանձում է վիրավոր մի շուն:

\*\*\*

Արևը խունկ է ծխում քարին, Բույրը սարերի կտուրն է լիզում, Թամբել են կարմիր կարոտներիս ձին, Խոտին թեք ընկել, աչքերն է թարթում:

Իմ կարոտների վաքը թեք է. Չիս թող չմնա կեսճանապարհին:



# ՎԵՐԱԴԱՐՁ



«Այ բալա, եղ ինչըր կեղնի, որ բոլորը կըզըղմին, մենք՝ չէ, ի՞նչ եղավ այսպես, ընչի՞ բոլի կորեր...»  
Այս կարոտ-բողոքը հորս դրախտավայր հոգում հատուկ անկյուն ուներ: Արդեն կես-դարյա ճանապարհ հարթահարած՝ հետևում էի նրա դրախտի բազմադեմք, բազմամուն, բազմաթիվ, բազում-բազումներին ու զմայլված գարնանում էի. «Մի՞թե դրախտում այդքան անկյուններ

կարող են լինել, մի՞թե հնարավոր է, որ հոգին այդքան մեծ լինի ու չհիվանդանա»:  
Հորս հոգու դրախտում ամենավորից ամենամեծը իր հատուկ տեղն ուներ: Ինքն արդեն ինքնեղորդ տանամայակին էր մոտենում. կարծես վաղորց ծանա-նակն էր, որ մի քիչ էլ այդ մեծ ու փոքրը իր մասին մտածեին, բայց չէ, բոլորի հոգսերը, դարդերը ավելուկի նման հյուսում, զգում էր ուսին. ինձ էլ խնդրում, որ «մի բան անեն, տեսնեն ինչ կանեն»:  
«Այ բալա, սաղ զբոսն, մենք՝ չէ: Հորս կարոտ-բողոքն է, խնդրանք-բողոքն է, մի բան պիտի անել: Անցնում են գործի, բոլորին խնդրում են, ում հարմար է եղել, կռվել է, հերոսացել, հարկավոր է գտնել»:  
«Այ բալա, բա մի ծաղիկ իմ ձեռքով չընեի՞՞ քարին...»  
Չէ, ճիշտ են ասում, որ ամեն

մարդ մեր կյանքում իր տեղն ու-նի: Ինձ թվում էր, թե 92-ին ֆի-դայի որդու հավերժանալը պիտի վերջ դներ մնացած բոլոր կա-րոտ-բողոքներին:  
«Այ բալա, մենք չզըղանք են տղային,- ձեռքի ծաղիկները որ-դու քարին հանձնելով, սրտի արցունքը կուլ տալով՝ հիշեց-նում էր հայրս»:  
Կյանքի վերջին օրերին 88-ամյա հորս մանկությունը ետ էր եկել: Ոչ, չկարծեք բանականը-յունը կորցրել էր, լրիվ սքափ ու-ղեղով, ինքն էլ կատարվածից մի քիչ շփոթված, մի քիչ գարնա-ցած, մի քիչ էլ ուրախացած էր: Բոլորը կողքին էին՝ հայրը, մայ-րը, քույրերը, եղբայրները, կի-նը, որդին: Մեծ շքահանդես էր, պատրաստվում էին դիմավորելու իրենց սիրելիին: Գալիս էին գրու-ցում, հարցուփորձ անում, գիշե-րը բոլորի հետ էր, առավոտյան՝

կարոտը քառապատկված, պատ-մում էր ինձ ու էլ չէր ուզում մնալ, շտապում էր միանալ նրանց.  
«Այ բալա, Գևորիս հետ կխո-րատեի... չգրանք»:  
Ի՞նչ պատասխանեի, քանի դեռ ոչինչ չունեի ասելու: Հորս ճանապարհեցի... Նրան տանջող ցավն ինձ պատեց: Մայիսի 9-ն էր, հեռուստատեսային Կարմիր հրապարակն է, ակնաջնջերիս ու աչքերիս մեջ են լցվում.  
«Շաբա՛, շաբա՛, շաբա՛».  
«Այ բալա, բա մե՞նք»:  
Հոգիս խռովում է, իրոք որ, ո՞ր է իմ հոր եղբայրը, ինչո՞ւ այսքան երկար փնտրում ու չենք գտնում:  
«Չէ, հայր իմ, չեն մոռացել, բայց դեռ...»:  
Խռոված հոգով էլ նստում են համակարգիչի դիմաց, մտածում են.  
«Վաղուց չեն բացել «Համա-դասարանցիներ» էջը, տեսնեն

ինչ կա-չկա»:  
Բացում են, նամակ ունեն: Նա-մակը Դոնի-Ռոստովից է, գրում է մեծ հորաքրոջս թոռը. «Մորա-քույր քան, տես՝ ում են գտել, սա մեր կրթած քեզին չէ՞»:  
Համակարգիչի էկրանին փոք-րիկ թրթի մի կտոր, սովորական թրթի կտոր, սևով սպիտակի վրա գրված գույծ, տառապանքի վա-ղեմություն ժամկետ չունեցող գույծ, որով վերջապես ներկա է գրվում մեծ հորեղբայրս՝ Գևոր-զը, ներկա է գրվում իր մահվան գույծի ծանուցագրով: Մի հավեր-ժություն մեր գերդաստանի իրա-կանությունից բացակա հորեղ-բայրս ներկա գրվեց, տուն եկավ:  
«Հայր, որտե՞ղ ես, գտել են...»  
  
ԱՐՄԵՆՈՒԴԻ ՄԻՆԻՍԹՐԱՆ  
11.05.2017թ.

# ՄՐՅԱՆԱԿԱԲԱՇԽՈՒԹՅՈՒՆ

«Արձագանք» բարեգործա-կան ընկերության և ընկերության նախագահ, թարգմանիչ Մարո Մաղոյան-Ալաջաջյանի կողմից հայտարարված պատմվածքների երկրորդ մրցույթի արդյունքներն արդեն ամփոփվել են: Հիշեց-նենք, որ մրցույթին մասնակցել ցանկացողները պետք է իրենց պատմվածքները ներկայացնեին հոկտեմբեր-մարտ ամիսների ըն-

թացքում: Ժյուրիի կազմում էին Հայաստանի ազգային պոլիտեխ-նիկական համալսարանի հայոց լեզվի ամբիոնի դասախոս, բա-նասիրական գիտությունների թեկնածու Սաթենիկ Եղիազարյա-նը, Հայաստանի գրողների միութ-յան անդամ, արձակագիր Շնոր-հիկ Շահինյանը և գրականագետ, բանասիրական գիտությունների թեկնածու Կարինե Մարտիրոս-

յանը: Մրցույթին մասնակցած 23 մասնակիցներից 5-ը բաղեցրին մրցանակային տեղեր:  
Ներկայացնենք արդյունքնե-րը. Լաուրա Հարությունյան, «Կո-կիկ չապիկ», 32 միավոր, Գյում-րի, առաջին կարգի մրցանակ, Նազիկ (Գեղիքնազ) Հակոբյան, «Արմատ», 30 միավոր, Երևան, առաջին կարգի մրցանակ, Մա-րինե Մկրտչյան, 28 միավոր, «Իմ

Լիզա Մոման», Գյումրի (Սպի-տակ), երկրորդ կարգի մրցանակ, Արմինե Նազարեթյան, «Կարո-տի գույնը», 27 միավոր, Գյումրի, երկրորդ կարգի մրցանակ, Ռոզա Դուրդաստյան, «Հրաշք», Շիրակի մարզ, Գ. Արևիկ, հատուկ մրցա-նակ Մարո Մաղոյանի կողմից: Ժյուրիի կողմից աշխատանք-ները գնահատվել են հետևյալ չա-փորոշիչներով՝

- ա) գեղարվեստական արժեք,
  - բ) օրիգինալ մտահղացում,
  - գ) լեզուն և շարադրանքը:
- Նշենք, որ «Արձագանք» ամսագրի հաջորդ համարում կտպագրվեն մրցանակակիր պատմվածքները:
- ՏԱՌԻՆԱ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՆԱՆ

**Ձիգրելիս Գյումրի...**

Գյումրին հարսնիք է՝ ֆայտոնի շախտվ, Սաղըդ համեցեք, ջուր կրեք մաղով, Յուրով ու դայրով պարեք տրնգի, Սորվեք, որ չընեն տեղ դեղ ընգի... Գյումրուն չես կոնա տամիս Երևան, Բոլի ըսե՛ շատ չի՞ թանգըցնե իրան, Կամ ըսես Գյումրի, հաց դնեն կուղե՞ս, -Օղուլ, դոնախին կըսե՛ն սոված ե՛ս... Գյումրին խասյաթ է, քարս-քարս շատ կաշե, Ո՛վ կոնա ըսե՛ քարն ըսպիս տաշե, Կամ հանգարձ լսե՛ ըսիգ ըսպես չէ, Խուղոջ, կես դե, չափոջ ճաննե: Գուզես կարոտնի, գուզես սիրտոջ բաց, Չես կըոնա Գյումրուն փաթթվիս ջիգրանց, Մե կըոնը սուր է, մեգելը բաց է, Սիրտը ծանոր է, բայց ոռը բաց է: Ի՞նչ էնես, ըսես դուրբանդ էղմիմ, Քիչքն կրածի կարոտս առնիմ... Չի ուզե ինքը, չէ՛, չի կրանա, Կոնա կըղոջ, թողնի հեռենա: Յամա՛ն, գոնյա թող քշենրդ պաճեն, -Օո դգիգ են՝ ե՛ս, շուն են կհաճե՛ մ: Չի էղնի ու չի, ըսիգ Գյումրին է, Դե չէ՛ քթամայեց հեշտն ու ոլորիկը: Կես էլ ուսիս ու քաղբիդ աշե, Դըղ դվան են, հլը չեն մաշե... Վերջիս մի՛ նայե, ինդկա՛ կըրոնա, Երգեսու գուզեն դավուլ ու գուռնա: Իմ դեն քյուպա ես, ես քեզի գուզեն Գրգեն, փաթթվիմ, խրատ տամ, հուզեն... Թե չէ՛ զլխեղ մենձ կըոնա՛մ, կոնա՛մ ես Ի՞նչ կոնաս էնես, այ կիլո ու կես... Ես ու մեննագ ես դուրբանդ էղմիմ, Կոնամ թե՛ գրգեմ, թե՛ չալակս առնիմ... Չթվա քար են, ըղուր մար են սարթ,

Մարդ բոլի էղնի մե կողորձ մարդ... Սիրոս կակուլ է, ես Գյումրին են, մո՛, Ազատ ելունուտ ունիմ թուլն Աստոն, Յենթոն ընդել էի, էնքան խնդածիմ, Լաճի մաման լավ լածծծծծիմը... Սկզբից ինչը սիր «Գյումրին հարսնի՞ք է՛...» ես փեսու տե՛րն են... մեկ էլ է՛ մի կը... Լեզվիս ծերին է, կայմի մե թուպն, Հա՛, հիշի շախը, դավուլն ու գուռնեն... Թեզ-թեզ կըզեն մղահան չենե, Լազիդակ, մեզը կոնասա ջորես: Արջիս, դե արի սխմեն իմ դոշիս, Համ կարոտոջ առ, համ քափ տու փոշիս...



Նկարը՝ Հակոբ Անանիան

**Գյումրվա խաղիկներ**

\*\*\*

Այսմի, հուսել ես մազըդ, Տեղն է քելվածիդ, մազըդ, Հոնը ինչխոր դու էղմիս, Բարդաշյանի տնազը...

\*\*\*

Վենձ կույսերու հավաքը, Բաց կթողնիմ դարբասը, Օր քախտ չունիմ ի՞նչ էնեն, Քուռն ընգի՞ն՞, թե՛ Մրաքը...

\*\*\*

Ձիյեզ ունիմ, կապած է, Չիս էլ շուտուց թամբած է, Երգան սպախ լավ տղու, Էկավ մազը թափած է...

\*\*\*

Մեր տները նույն մայլեն, Գնածել է իմ գայլեն, Շուշից երբ կաշեն, տատիդ Աղըմները կփայլեն...

\*\*\*

Ես լռեցու կնիզը, Ինչխոր սարի էղմիզը, Անդառն էնքան կըըրիս, Հարի տամըղ դեղմիզը:

\*\*\*

Պապա կայեք քյամարը, Մղավ մամիս տամարը, Ըսավ, թե բաղմիք չես գա, Յավար էլ են Թամարը:

\*\*\*

Ի՞նձըղ գով է գիշերը, Շարքատ կաթիմ քշենրդ, Գուզեն ըմբես մի՞ գ պակեն, Օր վեր թոնիմ դշերը:

\*\*\*

Եքսի օրը կիրազի, Խարամ հեղը կրազի, Շարմաղ կնիզը՞ ճարեն, Թող Վարդուշը տրակի:

ՏԱՌԻՆԱ ԿՐԱԶՆԵՆԱՆ

Հրատարակված է ՀՀ մշակույթի նախարարության աջակցությամբ:

Լրատվական գործունեությունն իրականացնող Հայաստանի գրողների միության Շիրակի մարզային մասնաճյուղ: Հասցեն՝ Շիրակի մարզ, Գյումրի, Գորկու 62 Վկայական N 01P 001543

տրված է 21.03.2005թ. հ.ն. (0312) 5 65 97

Խմբագրական խորհուրդ Համարի պատասխանատու Ռոզա Հովհաննիսյան

Համակարգչային ձևավորումը՝ «Էլդորադո» Տպագրված է «Գյումրի տպարան» APC տպագրատանը Տպարանակը՝ 500 Ծավալը՝ 2 տպագրական մասով